

Հաստատված է  
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի  
հոգաբարձուների խորհրդի  
22 դեկտեմբերի 2014թ նիստում

\_\_\_\_\_ Կ.Ճմարիտյան  
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի  
հոգաբարձուների խորհրդի նախագահ



## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրի իրականացման համար ՀՀ 2014թ. պետական բյուջեից ուղղվել է 151,983,700 ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ պետական աջակցության 2014 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով շուրջ 6200 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 14688 աջակցություն:

Տրամադրված աջակցության ուղղություն	2014 թվականի ընթացքում տրամադրված աջակցության քանակ
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	13064
Ուսուցողական աջակցություն	500
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	536
Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	235
ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	154
Ոլորտային աջակցություն	181
Ոլորտային աջակցության ծրագրի շրջանակներում դրամաշնորհների տրամադրում	18
<b>Ընդամենը</b>	<b>14688</b>
Տեղական տնտեսական զարգացման ծրագրում ընդգրկված համայնքների քանակ	46
Իրացված գյուղտեխնիկայի քանակ	181

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 5.3%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 94.7%-ը ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրված աջակցության մարզային բաշխվածքը հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 1635, Արարատի մարզում՝ 1786, Արմավիրի մարզում՝ 649, Գեղարքունիքի մարզում՝ 1668, Լոռու մարզում՝ 2202, Կոտայքի մարզում՝ 1562, Շիրակի մարզում՝ 1021, Սյունիքի մարզում՝ 663, Վայոց Ձորի մարզում՝ 1181, Տավուշի մարզում՝ 1546, Երևան քաղաքում՝ 775 (Հավելված 1):

2014թ. ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքները, ըստ առանձին ուղղությունների և աջակցության ծրագրերի, ներկայացված են ստորև.

## **1. ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի կառավարում, ամրապնդում և ընդլայնում**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարձրացման, մարզային մասնաճյուղերի աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման ուղղությամբ:

ՓՄՁ պետական աջակցության ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համագործակցություն է հաստատել նոր կազմակերպությունների հետ:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ համագործակցության շրջանակներում հոկտեմբերի 20-24-ը կազմակերպվել է «Շահութաբեր ռեսուրսարդյունավետ կառավարման համակարգ» (Profitable Resource Efficiency Management Systems) թեմայով վերապատրաստման դասընթաց Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի 13 փորձագետների համար, որի նպատակն էր ծանոթացնել նորարարական ուսուցողական և խորհրդատվական աջակցման այդ գործիքին և հետագայում կկիրառեն մեթոդաբանությունը Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության ծրագրերն իրականացնելիս: Դասընթացն անց է կացրել այդ համակարգի հիմնադիրներից գերմանացի փորձագետ Էդիթ Կուրցինգերը:

Հաշվետու ժամանակահատվածում Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) հետ համատեղ իրականացվող «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնություն» ծրագրի շրջանակներում նոյեմբերի 5-7-ը Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի աշխատակիցների համար ճապոնացի փորձագետները ներկայացրեցին Ճապոնական Կայզեն (Kaizen) մարքեթինգային գործիքը, որի նպատակն է հետագայում ներառել Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից իրականացվող «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի դասընթացային և խորհրդատվական մոդուլի մեջ: Դասընթացին մասնակցել են Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի 18 փորձագետ:

Հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ ՁԱԿ-ի 12 փորձագետներ մասնակցել են «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» և «Համայնքների մրցունակության ինդեքսի գնահատում» թեմաներով 5 օրյա դասընթացին:

Բացի այդ, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի աշխատակիցները մասնակցել են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրներում կազմակերպված մի շարք դասընթացների, համաժողովների և հանդիպումների:

Հաշվետու ժամանակահատվածում նշանակալի աշխատանքներ են իրականացվել Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ում կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՏՀ) ներդրման ուղղությամբ, որի շրջանակներում մշակվել է համապատասխան հայեցակարգ, և փորձագիտական խորհրդատվությունների արդյունքում կազմվել է տեխնիկական առաջադրանք, ինչպես նաև սահմանվել են գործարկման հաջորդական քայլերը: ԿՏՀ-ի ձևավորումն ու գործարկումը, ըստ տարեկան պլանավորման, պետք է ընթանա մի քանի փուլերով: Համակարգի ձևավորման նախնական փուլում կազմվել են Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի տարեկան ծրագրին համապատասխան աշխատանքային պլանը, ինչպես նաև կենտրոնական գրասենյակի ծրագրերի և մարզային մասնաճյուղերի բոլոր աշխատակիցների ամսական պլանները: Մշակվել են նաև տարեկան և ամսական պլանների, ինչպես նաև ամսական հաշվետվությունների ձևաչափեր Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի բոլոր ծրագրերի և աշխատակիցների համար: Բոլոր պլանները տեղադրվել են հաստատված ձևաչափերի մեջ: Համակարգի ներդրման նպատակով կազմակերպության ընտրության համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Ինստիգեյթ» ՓԲԸ-ն: Համակարգի գործարկման աշխատանքները կսկսվեն 2015 թվականից:

***«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրով «ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում, կառավարում և ընդլայնում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:***

## **2. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն**

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» 26 ծրագիր<sup>1</sup>

<sup>1</sup> ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան, Արմավիրի մարզի Արմավիր (2 ծրագիր), Տավուշի մարզի Նոյեմբերյան (2 ծրագիր), Իջևան և Բագրատաշեն քաղաքներում, ինչպես նաև Սյունիքի մարզի Խնձորեսկ և Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղերում ծրագրերն իրականացվել են ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID PRP) հետ համատեղ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակներում:

ՀՀ Լոռու մարզի Սպիտակ, Ալավերդի և Վանաձոր, Շիրակի մարզի Գյումրի (2 ծրագիր), Տավուշի մարզի Իջևան և Դիլիջան, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքներում ծրագրերն իրականացվել են ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) «Արդյունավետ աշխատանք Հայաստանում երիտասարդների համար. երիտասարդ ձեռներեցությունն աջակցություն» հետ համատեղ ծրագրի շրջանակներում:

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Արագածոտնի մարզի Աշտարակ, Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքներում, ինչպես նաև Երևանում (1 ծրագիր) ծրագրերն իրականացվել են Ասիական զարգացման բանկի (ADB) հետ համատեղ «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի շրջանակներում:

Երևանում 3 ծրագիր սիրիահայերի համար իրականացվել են ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակի (UNHCR) հետ համատեղ «Աջակցություն սիրիահայերին» ծրագրի շրջանակներում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի և Գավառ, Տավուշի մարզի Նոյեմբերյան (2 ծրագիր), Բագրատաշեն, Իջևան (2 ծրագիր) և Դիլիջան, Լոռու մարզի Սպիտակ, Ալավերդի և Վանաձոր, Շիրակի մարզի Գյումրի (2 ծրագիր), Կոտայքի մարզի Եղվարդ, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Արագածոտնի մարզի Ապարան, Աշտարակ և Արմավիրի մարզի Արմավիր (2 ծրագիր) քաղաքներում, Սյունիքի մարզի Խնձորեսկ, Հալիձոր և Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղերում, ինչպես նաև 4 ծրագիր՝ Երևանում (որից 3-ը՝ սիրիահայերի խումբ):

«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագիրը ներառում է ուսուցողական, մասնագիտական խորհրդատվության, տեղեկատվական, ինչպես նաև ֆինանսական աջակցության տրամադրման բաղադրիչներ: Մասնակցելով ծրագրին սկսնակ գործարարները ստանում են բիզնեսի պլանավորման, շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ: Ծրագրի տևողությունը 1 ամիս է, որի ընթացքում փորձառու մասնագետների ուղղորդմամբ սկսնակ գործարարները նախ մշակում են իրենց անհատական գործարար ծրագիրը, որից հետո ձեռնամուխ են լինում դրա իրականացմանը:

Ընդհանուր առմամբ, նշված 26 վայրերում ծրագրին մասնակցելու համար դիմել են 1184 սկսնակ գործարարներ, որոնցից հարցազրույցների արդյունքում ընտրվել են 536 մասնակից, մասնավորապես 192-ը՝ կին (36%) և 344-ը (64%) տղամարդ (*Հավելված 2.1*):

Հաշվետու ժամանակահատվածում «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի մասնակիցներից գործունեություն է ծավալում 211-ը (35% կին), որոնցից 146-ը 2014 թվականին իրականացված ծրագրերի մասնակիցներ են, իսկ 65-ը՝ 2013թ.-ի: Ծրագրին մասնակից 211 ՓՄՁ սուբյեկտներից 198-ը պետական գրանցում են ստացել և սեփական գործ սկսել ծրագրին մասնակցելու արդյունքում, իսկ 13-ը բարելավել են գործունեությունը: Գործող 211 ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասը՝ 181-ը, գրանցվել են որպես անհատ ձեռնարկատեր, իսկ 30-ը՝ որպես առևտրային իրավաբանական անձ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցում ստացած և գործունեություն ծավալած սկսնակ գործարարների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 67.0%, ծառայությունների ոլորտում՝ 28.0%, առևտրի ոլորտում՝ 5.0% (*Հավելված 2.2*):

Ընդհանուր առմամբ 2014 թվականի ընթացքում պետական գրանցում են ստացել և սեփական գործ սկսել 160 ՓՄՁ սուբյեկտ (*Հավելված 2.2*):

Ծրագրի իրականացման արդյունքում, ըստ դիտարկումների, ստեղծվել է շուրջ 190 նոր աշխատատեղ: Քանի որ ծրագրի մասնակիցներից շուրջ 50-ի ֆինանսավորումն իրականացվելու է 2015 թվականի արդյունքում, ըստ գնահատականների արդյունքում կստեղծվի առնվազն 50 նոր աշխատատեղ:

---

ՀՀ Սյունիքի մարզի Հալիձոր գյուղում ծրագրին իրականացվել է Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) հետ համատեղ ծրագրի շրջանակներում:

*«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրով «Մկանակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:*

### **3. Տեղական և տարածքային տնտեսական զարգացում**

Հաշվետու ժամանակահատվածում ՏՏԶ ծրագրի շրջանակներում իրականացվել է 100 նոր համայնքների տնտեսական քարտեզագրում: Թարմացվել և նորացվել է [www.ecomap.smednc.am](http://www.ecomap.smednc.am) կայքը, որտեղ տեղադրվել են 310 համայնքների տնտեսական քարտեզագրման արդյունքները՝ նորացված ձևաչափով:

«Տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Բիզնես Պարետա» ՍՊԸ հետ համագործակցության շրջանակում Հայաստանի 197 համայնքներում իրականացվել է 2384 հարցում՝ «Համայնքների մրցունակության ինդեքսի» գնահատման նպատակով:

Համայնքների տնտեսական ներուժի բացահայտման ուղղությամբ «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» են իրականացվել 16 համայնքային խմբերում (կլաստեր), որոնցից 3-ը «Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը՝ որպես որոշիչ գործոն Սևծովյան տարածաշրջանում մրցակցության խթանման համար» (LRED Net) ծրագրի շրջանակում: 16 կլաստերում ընդգրկվել են 46 համայնքներ: Վարժությունների արդյունքում բացահայտվել և համայնքի շահագրգիռ կողմերին են ներկայացվել մոտ 165 համայնքային տնտեսական զարգացման նախաձեռնություններ: Մշակվել և տպագրվել է 16 վերլուծություն՝ նշված համայնքների համար, որոնք տեղադրված են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կայքէջում:

#### **«Տեղական տնտեսական զարգացում» ծրագրի իրականացման ամփոփ ցուցանիշներ**

Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում				
h/h	իրականացման վայրը /համայնքները կլաստերում/	իրականացման ժամանակահատվածը	բացահայտած նախաձեռնությունների քանակը	իրականացված կրթական նախաձեռնությունների քանակը
1	Փոքր Վեդի, Լուսառատ, Եղեգնավան	Դեկտեմբեր 2013 հունվար 2014	15	Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման գործընթացներից հետո շահառու համայնքներում իրականացվել են մի շարք դասընթացներ
2	Բագրատաշեն, Դեբեդավան, Դեղձավան, Պտղավան	Փետրվար - մարտ 2014	12	
3	Զորական, Հաղթանակ	Մարտ 2014	11	
4	Սարդարապատ, Բամբակաշատ, Լենուղի, Ամասիա	Մարտ 2014	15	
5	Ապարան, Լուսազյուղ,	Ապրիլ 2014	15	

	Նիգավան, Քուչակ, Մարալանջ			սկսնակ գործարարության
6	Գավառ, Գանձակ, Կարմիրգյուղ	Մայիս 2014	15	աջակցության մասնակիցների համար՝
7	Բերդավան, Կողբ	Հունիս 2014	15	չրագործության,
8	Կոթի, Ոսկևան, Ջուջևան, Բաղանիս, Բարեկամավան	Հուլիս 2014	16	ջերմոցային և սառնարանային տնտեսությունների ուղղությամբ:
9	Ծովագյուղ, Սեմյոնովկա	Օգոստոս 2014	12	Մանրամասն տես՝ Ոլորտային
10	Մարիգյուղ, Աճարկուտ, Բերքաբեր, Կիրանց, Ներքին Ծաղկավան	Սեպտեմբեր 2014	15	աջակցության ծրագրերի և Ուսուցողական
11	Լուսաձոր, Դիտավան և Սև Քար	Սեպտեմբեր 2014	13	աջակցության ծրագրերի հաշվետվություններում
12	Ճամբարակ, Վահան	Նոյեմբեր-դեկտեմբեր 2014	9	
13	Թթուջուր, Գետիկ, Մարտունի	Նոյեմբեր-դեկտեմբեր 2014	12	

Իրականացված և իրականացման փուլում գտնվող նախաձեռնություններ՝

- Ենթակառուցվածքների վերակառուցման և կառուցման համար 2014 թվականի ընթացքում ուսումնասիրվել և կազմվել է 15 ծրագիր, որոնք հաստատվել են USAID PRP ծրագրի կողմից, ևս 3-ը լրամշակման և հաստատման ներկայացնելու փուլում են: Հաստատված ենթակառուցվածքային ծրագրերից 4-ն արդեն իրականացվել են:

**Իրականացված ենթակառուցվածքային ծրագրեր**

1. Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնքում կառուցվել է արոտավայրերի խմելու ջրի ցանց և խմոցներ: Տեղադրվել են 10 հատ 10 մետրանոց խմոցներ և մոտ 500 մետր երկարությամբ ջրագիծ: Համայնքում այս աջակցությունից օգտվել են տնտեսությունների 95 %-ը, որոնք զբաղվում են անասնապահությամբ:
2. Տավուշի մարզի Պտաղավան համայնքում իրականացվել է ոռոգման ցանցի մասնակի վերակառուցում: 1536մ. երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով ջրագիծ է կառուցվել, որը միացվել է գոյություն ունեցող ցանցին: Այստեղ տարիներ շարունակ չեն ջրվել այգիները: Ծրագրի իրականացման արդյունքում 35 հա հողատարածք դարձել է ոռոգելի: Արդյունքում մոտ 330 տնտեսություններ կստանան ավելի շատ բերք և այգիների ընդլայնման պայմաններ:
3. Տավուշի մարզի Դեղձավան համայնքում ևս իրականացվել է ոռոգման ցանցի մասնակի վերակառուցում: Այստեղ ջրի բացակայության պատճառով եղած այգիներն ամբողջությամբ չորացել են: Կառուցված 914մ երկարությամբ ջրագիծը հնարավորություն է տալիս նոր այգիներ հիմնել՝ մոտ 32 հա տարածության վրա, որից օգտվելու են 70 տնտեսություններ:

4. Տավուշի մարզի Զորական համայնքում իրականացվել է ոռոգման ցանցի մասնակի վերակառուցում: 1194 մետր երկարությամբ նոր ոռոգման ցանցի կառուցումը բարելավելու է տնամերձ հողերում եղած այգիների վիճակը և նպաստելու է նոր այգիների հիմնմանը: Ընդհանուր առմամբ ոռոգելի է դառնում 35 հա, որից օգտվում են 120 տնտեսություններ:

- Եղանակային պայմանների մեղմացման դեպքում սպասվում են Արմավիրի մարզի Լենուդի (600մ ոռոգման ջրանցք) և Արագածոտնի մարզի Նիգավան համայնքներում (արոտավայրերի ջրարբիացում) ենթակառուցվածքային ծրագրերի վերսկսման աշխատանքները:
- Որպես նախաձեռնություն՝ USAID PRP ծրագրի շրջանակներում անցկացվել են դասընթացներ երիտասարդների համար՝ Տավուշի մարզի Բագրատաշեն և Արարատի մարզի Փոքր Վեդի համայնքներ «Առաջնորդություն և համայնքային զարգացում» թեմայով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Տավուշի մարզի Հաղթական և Զորական համայնքներում ակտիվ երիտասարդների համար դասընթաց և կարիքների բացահայտում, որին ներգրավված են եղել շուրջ 20 մասնակիցներ (Հավելված 6):
- Երևանում կազմակերպվել է համտեսի երեկո Փոքր Վեդի և այլ համայնքներից գինեգործների, չրագործների և պանրագործների արտադրատեսակների ներկայացման համար:

2014թ ընթացքում ներկրվել է 168 հատ նոր բելառուսական MT3 82.1 մակնիշի տրակտոր<sup>2</sup>: Հաշվետու ժամանակահատվածում վաճառվել է 181 միավոր գյուղ. տեխնիկա և հարակից սարքավորումներ, որոնցից 160-ը՝ MT3 82.1 մակնիշի տրակտոր (Հավելված 3):

Բանակցությունների արդյունքում կոմբայններ ներկրելու համար վերջնական գին է սահմանվել 2,350,000 ռուսական ռուբլի մեկ կոմբայնի համար, առանց տեղափոխման ծախսերի: 21.07.2014թ. «Ռոստուելմաշ» ընկերության հետ կնքվել է պայմանագիր և վճարվել է մոտ 116 մլն. Դրամ՝ 4 հատ “Niva effect” հացահատիկահավաք կոմբայն ձեռք բերելու նպատակով: Նույն թվականի նոյեմբերի 21-ի դրությամբ բոլոր չորս կոմբայնները ներկրվել են Հայաստան և հասցվել պատվիրատու համայնքներ: Տեխնիկաների հավաքման և շահագործման հանձնելու աշխատանքներն ավարտվել են «Սպեցմաշ» (հանդիսանում է «Ռոստուելմաշ» ընկերության պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում) ընկերության պատասխանատվությամբ: Փորձարկումից հետո կվաճառվի «ՓՄՁ Ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ը, որն էլ լիզինգային եղանակով կտրամադրի Գեղարքունիքի մարզի Գանձակ, Սոտք, Կարճաղբյուր և Վարդաձոր համայնքներին: Կոմբայնների վաճառքի գինը նշված խմբաքանակի համար 30,5 մլն դրամ է: Նախատեսվում է մինչև դեկտեմբեր ամսվա վերջ հաստատել նոր պատվերը հաջորդ խմբաքանակի համար (ևս 4 հատ):

<sup>2</sup> Ծրագիրն իրականացվել է ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի որոշմամբ սահմանված 900 մլն դրամի փոխատվության շրջանակներում, որից շուրջ 563 մլն ՀՀ դրամը վերադարձվել է Սերմերի գործակալություն ՊՈԱԿ-ին:



**Ընդհանուր առմամբ 2014թվականի ընթացքում.**

- *Ախտորոշվել են ՀՀ 46 համայնքներ, որոնցից 43-ը PRP, իսկ 3-ը՝ LRED ծրագրերի շրջանակում:*
- *Իրականացվել է ենթակառուցվածքային 4 ծրագիր 4 համայնքներում:*
- *Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի պաշտոնական կայքի [www.ecomap.smednc.am](http://www.ecomap.smednc.am) բաժինը համալրվել է նս հարյուր համայնքների տնտեսական քարտեզագրման արդյունքներով:*
- *Ներկրվել է 168 միավոր բելառուսական MT3 82.1 մակնիշի տրակտոր, որոնցից 160-ը վաճառվել է:*
- *Ներկրվել և վաճառվել է 4 հատ “Niva effect” հացահատիկահավաք կոմբայն:*

**«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրով «Տեղական և տարածքային տնտեսական զարգացում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:**

**4. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում**

**4.1. Հայաստանում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի գործարար համագործակցության կենտրոնի գործունեության ապահովում**

Հաշվետու ժամանակահատվածում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում աշխատանքներ են իրականացվել Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման, հայաստանյան և արտասահմանյան ձեռնարկությունների միջև գործարար կապերի հաստատման, գործարար համագործակցության հիմնապաշարի համալրման, ՁԵՑ-ի անդամ կազմակերպությունների միջև կապերի հաստատման և համագործակցության ընդլայնման, տեղեկատվության փոխանակման և այլ ուղղություններով:

Մշակվել և գործարարների շրջանում տարածվել է Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի էլեկտրոնային նորությունների ամսական տեղեկաթերթի 12 նոր համար՝ անգլերեն և հայերեն լեզուներով, որոնց հասցեատերերի քանակը գերազանցում է 3000-ը: Տեղեկաթերթը պարունակում է տեղեկատվություն հաղորդակցման կենտրոնի գործունեության, գործարար և տեխնոլոգիական համագործակցության առաջարկների և արտերկրում նախատեսվող գործարար միջոցառումների վերաբերյալ:

Բացի այդ, մշակվել և հայ գործարարների շրջանում տարածվել է նաև «Միջազգային գործարար համագործակցության միջոցառումներ» խորագրով տեղեկաթերթի 4 համար, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն արտերկրներում տեղի ունեցող միջոցառումների մասին: Այս տեղեկաթերթի հասցեատերերի քանակը նս գերազանցում է 3000-ը:

Մշակվել և ավելի քան 3000 գործարարների միջև տարածվել է «Տեխնոլոգիական առաջարկների և հարցումների» եռամսյակային տեղեկաթերթի 4 համար, որն իր մեջ պարունակում է տեխնոլոգիական առաջարկներ և հարցումներ ՁԵՑ անդամ երկրներից:

ՁԵՑ-ի գործունեության շրջանակներում ձեռնարկությունների միջև գործարար համագործակցության հաստատման նպատակով ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարում տեղադրվել են ևս 17 գործարար համագործակցության առաջարկներ և 1 տեխնոլոգիական համագործակցության առաջարկ (*Հավելված 4*)՝ ընդհանուր առմամբ կազմելով 161: Ներկայումս ևս 3 գործարար համագործակցության առաջարկներ գտնվում են մշակման փուլում:

Գործարարների կողմից ներկայացված պահանջների համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում 41 հարցում է կատարվել Հայաստանում ատամնաբուժական միջոցներ, լուսադիոդային լամպեր, կոսմետիկա ներմուծողների, մանկական տեքստիլ, շոկոլադ, գուգագուլպաներ, թուղթ արտադրողների, կենդանական ծագման ապրանքների, մասուրի արտահանման, բնական պիգմենտներ, տեքստիլ արտադրանք տարածողների և այլնի վերաբերյալ: Համապատասխան տեղեկատվություն է ստացվել ՁԵՑ-ի Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ուկրաինայի, Մոլդովայի, Բրիտանիայի, Լեհաստանի, Չեխիայի, Բուլղարիայի, Թուրքիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Հունգարիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների գործընկերներից, որը փոխանցվել է գործարարներին:

ՁԵՑ-ի գործընկերների կողմից ներցանցում տեղադրված 42 հարցումներին ուղարկվել են տեղական 143 ընկերությունների (այդ թվում թոչնաֆարրիկաների, շուկայի հետազոտություն կատարող ընկերությունների, դեղագործական ընկերությունների, գրենական պիտույքներ ներմուծողների, կրուսասան արտադրողների, լոգարանի տեքստիլ ներմուծողների, շինարարական ընկերությունների, անշարժ գույքի առևտրով զբաղվող ընկերությունների, գինիներ ներմուծողների, պլաստիկ արտադրողների, մանրահատակ արտադրողների, չիր արտադրողների, LED լամպեր ներմուծողների և այլ ոլորտում գործող ընկերությունների) կոնտակտները:

ՁԵՑ-ի ներցանցում տեղադրված գործարար համագործակցության առաջարկներից 73-ի նկատմամբ ստացվել են 83 հետաքրքրության առաջարկներ Կիպրոսից, Հոլանդիայից, Բուլղարիայից, Թուրքիայից, Հունգարիայից, Իսրայելից, Լիտվայից, Մեծ Բրիտանիայից, Չեխիայից, Սլովակիայից, Իսպանիայից, Իտալիայից և այլն: Միաժամանակ, հայկական 16 ընկերություններ հետաքրքրության առաջարկներ են ներկայացրել 39 ընկերությունների նկատմամբ (Ռումինիա, Լիտվա, Թուրքիա, Ռուսաստան, Բուլղարիա, Գերմանիա, Շվեդիա, Մեծ Բրիտանիա, Լեհաստան, Ռումինիա, Իտալիա, Իսպանիա և այլն): Հաշվետու ժամանակահատվածում 100-ից ավելի գործարարների միջև փոխանակվել են կոնտակտային տվյալներ, որոնցից 5-ի միջև ներկայումս բանակցություններ են ընթանում համագործակցության հաստատման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում հայկական «Ձեր իրավախորհրդատուն» ՍՊԸ-ն համագործակցության համաձայնագիր է հաստատել իսպանական «JURIS TRADING» ընկերության հետ:

2014թ.-ի մարտի 6-ին «Բի Էս Սի» բիզնես աջակցման կենտրոնի նախաձեռնությամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի դահլիճում արտահանման ներուժ ունեցող արտադրության ոլորտի 9 ընկերությունների ներկայացուցիչներին ներկայացվել է Ձեռնարկությունների եվրոպական ցանցը, ցանցի առաջարկած գործիքները և հնարավորությունները: Միջոցառման ընթացքում «Հայ կոնսալտ» խորհրդատվական ընկերությունը հայ գործարարներին է ներկայացվել նաև ISO որակի կառավարման միջազգային ստանդարտների ներդրման օգուտները և հնարավոր տարբերակները:

ՁԵՑ-ի շրջանակներում փետրվարի 27-ին Ավստրիայում կազմակերպվող “Let's connect: business & innovation - Biomass and Energy Efficiency in Buildings Brokerage Event” միջոցառմանը ՓՄՁ ԶԱԿ-ը հանդես է եկել որպես համակազմակերպող: Միջոցառմանը մասնակցել է 1 հայկական ընկերություն:

Մարտի 10-14-ը Գերմանիայի Հաննովեր քաղաքում տեղի ունեցող “CeBIT” կոնֆերանսի շրջանակներում կազմակերպվել են գործարար հանդիպումներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ևս տարածվել է հայկական ընկերություններին: Այս միջոցառմանը ևս Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը որպես համակազմակերպող է հանդես եկել: Միջոցառմանը մասնակցել է հայկական «Ի-Վորքս» ՍՊԸ-ն:

Սեպտեմբերի 30-ին Լեհաստանի Պոզնան քաղաքում տեղի ունեցող “Polagra food” միջազգային տոնավաճառի վերաբերյալ տեղեկատվությունը տարածվել է հայկական ընկերությունների շրջանում: Արդյունքում ևս 2 հայկական ընկերություն մասնակցել են նշված միջոցառմանը և դրա շրջանակներում կազմակերպված գործարար հանդիպումներին: Այս միջոցառմանը ևս Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հանդես է եկել որպես համակազմակերպող:

*Ընդհանուր առմամբ 2014 թվականի ընթացքում ՁԵՑ-ի շրջանակներում տրամադրվել է 186 աջակցություն՝ թվով 154 ՓՄՁ սուբյեկտներին, այդ թվում՝*

- 18 ՓՄՁ սուբյեկտների գործարար նկարագրեր տեղադրվել են Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցում,
- 41 ՓՄՁ սուբյեկտների կողմից ստացված հարցումներ տեղադրվել են ՁԵՑ-ում,
- 16 ՓՄՁ սուբյեկտների համար նախապատրաստվել և ՁԵՑ համապատասխան գործընկերներին են ուղարկվել 39 հետաքրքրության առաջարկներ,
- Հայաստանյան 73 ՓՄՁ սուբյեկտների նկատմամբ ստացվել են 83 հետաքրքրության առաջարկներ և ներկայացվել են նշված ընկերությունների տվյալները,
- 5 ՓՄՁ սուբյեկտներ մասնակցել են միջազգային միջոցառման,
- 1 ՓՄՁ սուբյեկտ կնքել է համագործակցության համաձայնագիր:

Հայաստանում ՁԵՑ-ի գործարար համագործակցության կենտրոնի 2013-2014թթ. աշխատանքային ծրագիրն ավարտվում է 2014թ. դեկտեմբերի 31-ին: ՁԵՑ-ում գործունեությունը շարունակելու համար հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ նոր հայտ է ներկայացրել Եվրահանձնաժողովի կողմից հայտարարված Ձեռնարկությունների

Եվրոպական Ցանցի 2015-2020 թվականների մրցույթին: Մրցույթի արդյունքները կիրառարակվեն 2015թ. առաջին եռամսյակի ընթացքում:

*«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրով «Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:*

## 5. Ոլորտային աջակցություն

Հաշվետու ժամանակահատվածում, համագործակցելով ԱՄՆՄԶԳ «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի, ՄԱԶԾ (UNDP) և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) հետ, շարունակվել են պանրի փոքրածավալ արտադրության բարելավման ուղղությամբ աշխատանքները ՀՀ Սյունիքի մարզի Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ, Հարթաշեն և Քարաշեն, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Լճաշեն, Չկալովկա և Նորաշեն համայնքների խմբերում: Մասնավորապես, նշված համայնքների պանրագործների համար կազմակերպվել են երկօրյա դասընթաց/խորհրդատվություններ պանրի արտադրության տեխնոլոգիաների կատարելագործման վերաբերյալ, իսկ Գեղարքունիքի մարզում նախապատրաստական աշխատանքներ են կատարվել պանրի արտադրության ուսուցողական կենտրոն հիմնելու ուղղությամբ՝ սերտորեն համագործակցելով ՄԱԶԾ-ի հետ:

«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի հետ համատեղ Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղում անցկացվել է «Հիգիենան պանրի գործարանում» և «Գառուղա պանրի արտադրության տեխնոլոգիա» թեմաներով պանրագործների որակավորման բարձրացման դասընթաց՝ 8 պանրագործների համար (Հավելված 5): Արարատի մարզի Փոքր Վեդի համայնքում անցկացվող «Սկսնակ գործածարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում իրականացված դասընթացի 20 մասնակիցների համար կազմակերպվել են տեխնոլոգիական դասընթաց/խորհրդատվություններ ջերմոցներում մշակաբույսերի աճեցման և չրերի պատրաստման, ինչպես նաև 17 մասնակիցների տրվել է տեղեկատվություն ջերմոցային և սառնարանային տնտեսությունների կառուցման վերաբերյալ (Հավելված 5): Բացի այդ, նույն դասընթացի մասնակիցներին հասցվել են տեղեկություններ մոդելային ջերմատներ, չորանոցներ ու սառնարանային տնտեսություններ կառուցելու համար անհրաժեշտ շինանյութերի, սարքավորումների և այլ միջոցների տեսակների, քանակների և գների վերաբերյալ, ինչը հնարավորություն է տվել նրանց առավել իրատեսական ու հիմնավորված բիզնես ծրագրեր մշակել:

Տավուշի մարզի Նոյեմբերյան և Բագրատաշեն համայնքներում «Սկսնակ գործածարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում

իրականացված դասընթացի 14 մասնակիցների համար կազմակերպվել են «Ջերմատներում մշակաբույսերի աճեցման տեխնոլոգիաներ», իսկ 15 մասնակցի համար՝ «Պտուղ-բանջարեղերի և չրերի սառնարանային պահպանման տեխնոլոգիաներ» թեմաներով տեխնոլոգիական դասընթաց/խորհրդատվություններ, ինչպես նաև տրամադրվել է տեղեկատվություն՝ ջերմոցային տնտեսությունների կառուցման առանձնահատկությունների վերաբերյալ (Հավելված 5):

Նպատակ ունենալով բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների մրցունակությունն ու կենսունակությունը՝ ծրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում: Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է դրամաշնորհների տրամադրման կանոնակարգ, համաձայն որի, դրամաշնորհներ տրամադրվում են «Սկսնակ գործարարների աջակցություն» ծրագրի շրջանակներում գործարար ծրագիրը բարեհաջող պաշտպանած և Ծրագրի թիրախային ոլորտներում գործող ՓՄՁ-ներին (մոդելային չորանոցների, ջերմոցների և սառնարանների կառուցման համար): Դրամաշնորհները տրվում են նյութերը և/կամ սարքավորումները ձեռք բերելու և շահառուին տրամադրելու միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Արարատի և ՀՀ Տավուշի մարզերի 18 ՓՄՁ սուբյեկտներ սարքավորումների/նյութերի ձևով ստացել են դրամաշնորհներ:

Նշված միջոցները մատակարարելու համար, հայտարարված մրցույթի արդյունքում ընտրվել են 3 մատակարար կազմակերպություններ, որոնց հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր:

Դրամաշնորհների տրամադրման մանրամասները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

**Ծրագրի շրջանակներում տրամադրված դրամաշնորհների քանակներն ու գումարներն ըստ տնտեսության ոլորտների և մարզերի**

Գործունեության ոլորտը	Արարատի մարզ		Տավուշի մարզ		Ընդամենը	
	քանակը (հատ)	գումարը (ՀՀ դրամ)	քանակը (հատ)	գումարը (ՀՀ դրամ)	քանակը (հատ)	գումարը (ՀՀ դրամ)
Ջերմոցային տնտեսություն	2	1,633,000	7	4,358,800	9	5,991,800
Չրագործություն	4	3,234,500	1	665,500	5	3,900,000
Սառնարանային տնտեսություն	1	485,193	3	1,490,397	4	1,975,590
<b>Ընդամենը</b>	<b>7</b>	<b>5,352,693</b>	<b>11</b>	<b>6,514,697</b>	<b>18</b>	<b>11,867,390</b>

Համագործակցելով «Վիստա» կազմակերպության հետ, որը ՀՀ-ում իրականացնում է ԱՄՆԱԶԳ կողմից ֆինանսավորվող «Ֆերմերից ֆերմերին» (Farmer to Farmer) ծրագիրը, ՀՀ

Տավուշի մարզում կազմակերպվել են անհատական խորհրդատվություններ «Ոլորտային աջակցության ծրագրեր»-ի շրջանակներում դրամաշնորհ ստացած ջերմոցներ կառուցող շահառուների համար (*հավելված 5*), որն անցկացրել է ԱՄՆ Օրեգոնի պետական համալսարանի գյուղատնտեսական խորհրդատվությունների բաժնի խորհրդատու Դեյվ Ադամսը: Վերջինիս կողմից խորհրդատվությունների ընթացքում պարզաբանումներ են տրվել շահառուների կողմից բարձրացված բազմաբնույթ հարցերի՝ ջերմոցի մետաղական հանգույցների կառուցման, օդափոխության գործընթացի արդյունավետ կազմակերպման, ջեռուցման, հովացման ապահովման, տարբեր մշակաբույսերի աճի պայմանների և այլնի վերաբերյալ: Այդ պարզաբանումներն ու խորհուրդները, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Դեյվ Ադամսի կողմից ամփոփվել են և տրամադրվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին էլեկտրոնային տարբերակով՝ թարգմանելու և տեղեկատվական/խորհրդատվական թերթիկի տեսքով ջերմոցներ շահագործելով հետաքրքրված շահառուներին բաժանելու նպատակով:

ՄԱԶԾ-ի հետ համագործակցության շրջանակներում վերջինիս աջակցությամբ Տավուշի մարզի Կոթի և Չինարի գյուղերում կառուցված ջերմոցների 23 սեփականատերերի համար կազմակերպվել են «Ջերմատներում մշակաբույսերի աճեցման տեխնոլոգիաներ» թեմայով տեխնոլոգիական դասընթաց/ խորհրդատվություն (*Հավելված 5*):

Տավուշի մարզի Իջևան համայնքում «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում իրականացված դասընթացի 20 մասնակիցների համար կազմակերպվել են «Ջերմատներում մշակաբույսերի աճեցման տեխնոլոգիաներ» և «Ջերմատների կառուցում» թեմաներով տեխնոլոգիական դասընթաց/խորհրդատվություններ (*Հավելված 5*):

Ուսումնասիրվել են ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից մշակված «Չորացված մրգի արտադրության գործարար ուղեցույց»-ը, ինչպես նաև EDMC ծրագրի շրջանակներում մշակված «Չրագործության պրակտիկ ուղեցույց»-ը և դրանց բարելավման ուղղությամբ ներկայացվել են առաջարկություններ:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) և «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման հիմնադրամի» (CARD) հետ համատեղ տպագրված «Պանրի արտադրությունը ֆերմերային տնտեսություններում» և «Միջազգային ֆինանսական կորպորացիայի» (IFC) կոմից տպագրած «Պատշաճ արտադրական պրակտիկայի և պատշաճ հիգիենայի պրակտիկայի կիրառման ձեռնարկ չորացված միրգ ու բանջարեղեն արտադրողների համար» ձեռնարկների տրամադրումը գործող և/կամ պոտենցիալ ՓՄՁ-ներին:

*Ընդհանուր առմամբ, ՈԱԾ-երի շրջանակներում 2014 թվականի ընթացքում տրամադրվել է 199 աջակցություն, որից 181-ը տեխնոլոգիական դասընթացի, անհատական խորհրդատվությունների, իսկ 18-ը՝ տեխնոլոգիական դրամաշնորհների տեսքով:*

*«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրով «Ոլորտային (արդյունաբերական համակարգերի կառուցմանն) աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:*

## **6. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցություն**

*ա) ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում*

Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխություններին ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների ներկայացման ուղղություններով անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակում և մասնաճյուղերում շարունակում են գործել 2013 թվականից ներդրված էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման աջակցության կենտրոնները, որոնց միջոցով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի մասնագետները բազմաթիվ ՓՄՁ սուբյեկտների օգնել են լրացնել և էլեկտրոնային եղանակով հարկային մարմիններ ներկայացնել «Եկամատային հարկի ամսական ամփոփ հաշվարկը» և այլ էլեկտրոնային հաշվետվություններ ու հաշվարկներ:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման և հարկային օրենսդրության այլ հարցերի պարզաբանման նպատակով ս.թ. փետրվար-մարտ ամիսներին ՀՀ բոլոր մարզերում տեղի են ունեցել սեմինար-խորհրդատվություններ: Սեմինարների ընթացքում մանրամասն ներկայացվել են «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի մանրամասները, գործատուների և անհատ ձեռնարկատերերի հարկման առանձնահատկությունները: Բացի այդ, գործարարները հնչեցրել են հարկային օրենսդրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, որոնք ստացել են իրենց պատասխանները: *Վերը նշված սեմինար-խորհրդատվություններին ընդհանուր առմամբ մասնակցել են շուրջ 500 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ:* Շուրջ 2 հազ. ՓՄՁ սուբյեկտներ տեղեկացվել են նշված փոփոխությունների մասին հեռախոսազանգերի, էլեկտրոնային փոստի, տեղեկատվական թերթիկներ տարածելու միջոցով:

Գործարարության աջակցման գրասենյակի և ՓՄՁ ԶԱԿ-ի փորձագետների համագործակցության շրջանակներում «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նպատակով ՀՀ մարզերում գործող ՓՄՁ սուբյեկտների շրջանում կատարվել են հարցումներ և ուսումնասիրություններ, բացի այդ, մարզային սեմինարների ընթացքում գործարարներին ներկայացվել է օրենքի նախատեսվող

փոփոխությունը, հավաքագրվել են առաջարկություններ: Գործարարության աջակցման գրասենյակի հետ համատեղ մշակվել է օրենքում կատարվող փոփոխությունների առաջարկություն: Առաջարկությունները ներկայացվել են ՀՀ վարչապետին կից ՓՄՁ խորհրդի քննարկմանը, որտեղ տրվել են համապատասխան հանձնարարականներ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու և օրենքի նախագիծը մշակելու ուղղությամբ: Բազմաթիվ հանդիպումների արդյունքում քննարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված «Շրջանառության հարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Հարկերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր, որոնք արդեն իսկ ընդունվել են Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ են մտել ս.թ. հոկտեմբերի 1-ից: Հուլիս և օգոստոս ամսիններին վերը նշված օրենքների փոփոխությունների մասին ՓՄՁ սուբյեկտներին իրազեկելու նպատակով ՀՀ բոլոր մարզերում Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից կազմակերպվել և իրականացվել են սեմինար- խորհրդատվություններ, որոնց մասնակցել են շուրջ 500 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ:

«ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկդային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցման» ծրագրի շրջանակներում սուբսիդավորվել է 212 հայտ:

Հաշվետու ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցների հետ ակտիվ աշխատանք է տարվել կենտրոնի գործունեությունը լուսաբանելու և նոր ուղղակարությունն ու ուղղությունները հանրայնացնելու նպատակով:

Բացի հեռուստահաղորդումներից, ՁԱՄ-երով բազմիցս ներկայացվել են Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի գործադիր տնօրենի հարցազրույցները ՓՄՁ ոլորտի խնդիրների և Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի գործունեության վերաբերյալ:

«Արմենպրես» գործակալության հետ արդյունավետ գործընկերության հիման վրա Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ը գործակալությանն է տրամադրում Հայաստանում բիզնես նախաձեռնած և հաջողության հասած գործարարների մասին պատմող լրագրողական հոդվածներ, իրադարձությունների մասին պատմող տեղեկություն: Յուրաքանչյուր միջոցառումից հետո ՓՄՁ ՁԱԿ-ի կայքին զուգահեռ հոդվածները հայտնվում են նաև Արմենպրես, Պանորամա, Ի-մեդիա և այլ կայքերում, Արմնյուզ և Արմենիա հեռուստաընկերությունները մշտապես ռեպորտաժ են պատրաստում «Աջակցություն սիրիահայերին» ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումների մասին:

2014 հունվար-ապրիլ ամիսներին Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ը մեդիաարշավ է կազմակերպել նաև ՀՀ վարչապետի «Լավագույն կին գործարար» 2014թ. մրցանակաբաշխության կազմակերպման, հայտերի ընդունման և մրցանակաբաշխության օրը միջոցառման լուսաբանման ուղղությամբ:

Հոկտեմբերի 2-ին «Բլից ինֆո» մամուլի ակումբում կազմակերպվել էր ՓՄՁ ՁԱԿ-ի փոխտնօրեն Կարեն Գևորգյանի ասուլիսը՝ շրջանառության հարկի վերջին փոփոխությունների վերաբերյալ: Այն լայն լուսաբանում է ստացել հատկապես կայքերի շրջանում:



Տպագրվել են կենտրոնի գործունեության 6 ուղղությունների մասին պատմող, նոր դիզայնով բուկլետները: Ասիական զարգացման բանկի կանանց ձեռներեցության զարգացման ծրագրի օժանդակությամբ հատուկ «Լավագույն կին գործարար» 2014 թ. մրցանակաբաշխության համար կազմակերպվել է նախորդ տարիների հաղթողների մասին պատմող բուկլետների տպագրությունը և 16-րդ աստիճանի վավերագրական ֆիլմը:

Ավարտվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կայքի նոր ձևավորման աշխատանքը: Կայքը նոր ձևավորմամբ հասանելի է, արդեն տեղադրված է կենտրոնի սերվերում և գործում է ամբողջությամբ: Կայքում շարունակվում է գործարարների հաջողության մասին պատմող հոդվածների թողարկումը:

Շարունակում է ակտիվորեն գործել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ֆեյսբուքյան էջը: Այն օգնում է երկխոսություն ծավալել շահառուների և կենտրոնի միջև: Ֆեյսբուքին զուգահեռ և կենտրոնի ֆեյսբուքյան էջի հետ համընթաց (սինխրոնացված) գործում է նաև կենտրոնի էջը Թվիթեր սոցիալական ցանցում: Յուրաքանչյուր վիդեո-սոցիալական ցանցում կենտրոնը, 2012թ.-ից սկսած, տեղադրում և ներբեռնում է իր գործունեության հետ կապ ունեցող տեսանյութերը:

Հաշվետու ժամանակահատվածում Հաշվապահական կենտրոնում գործող կազմակերպությունների միջոցով հաշվապահական հաշվառման ծառայությունների տրամադրման ուղղությունները աջակցություն է ցուցաբերվել 221 ՓՄՁ սուբյեկտի:

#### *բ) ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն*

ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (ՁԶՇՄ) հետ համատեղ ծրագրի շրջանակներում 2014 թվականի ընթացքում ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է «Ֆինանսական պլանավորում գերփոքր և փոքր ձեռնարկությունների համար» թեմայով դասընթացների իրականացումը և կազմակերպվել է վեց դասընթաց ՀՀ Արարատի մարզի Արտաշատ, Լոռու մարզի Վանաձոր, Տավուշի մարզի Նոյեմբերյան, Արմավիրի մարզի Արմավիր, Գեղարքունիքի մարզի Սևան և Շիրակի մարզի Գյումրի քաղաքներում, որոնց մասնակցել է 87 ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչներ: Դասընթացի հիմնական թեմաներն են. վարկավորման սկզբունքները և վարկունակության չափորոշիչները ՀՀ-ում, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը, հիմնական միջոցների (պաշարների, ոչ նյութական ակտիվների, հասույթի, ծախսերի) հաշվառումը, ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը, ֆինանսական պլանավորման և բյուջետավորման սկզբունքները, ՀՀ հարկային օրենսդրությունը, ինչպես նաև Էլեկտրոնային հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը: Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում գործարար կանանց համար նույնպես կազմակերպվել է «Ֆինանսական պլանավորում գերփոքր և փոքր ձեռնարկությունների համար» թեմայով երեք դասընթաց ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան, Արագածոտնի մարզի Թալին և Սյունիքի մարզի Մեղրի քաղաքներում, որոնց մասնակցել են 51 կին գործարար: (Հավելված 6)

«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից իրականացվող և Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն շրջանառու միզրանտներին և

նրանց վերաինտեգրումը ՀՀ-ում» ծրագրի շրջանակներում ս.թ. ապրիլի 28-ից մայիսի 15-ը Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում կազմակերպվել են բիզնես դասընթացներ 13 օր տևողությամբ: Ծրագրին մասնակցել են 19 միգրանտներ, որոնք վերջին տարում 3 ամիս և ավելի գտնվել են ՌԴ-ում, վերադարձել են Հայաստան և ցանկանում են հիմնել սեփական բիզնես: Արդյունքում, մասնակիցները ներկայացրել են իրենց գործարար ծրագրերը, որոնցից երեք առավել իրատեսականները ստացել են ֆինանսական աջակցություն (դրամաշնորհ)՝ Հայաստանում սեփական բիզնես հիմնելու նպատակով (*Հավելված 6*):

«Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում ս.թ. հունիսի 25-ից 27-ը Աղվերանում կազմակերպվել է մենթորության եռօրյա դասընթաց կին ձեռներեցների համար, որին մասնակցել են 15 գործարար կին Երևանից և ՀՀ մարզերից, որոնցից 7-ը՝ փորձառու գործարար կանայք են (mentors), իսկ մյուս 8-ը՝ սկսնակ (mentees): Դասընթացի հիմնական թեմաներն էին. մենթորության սահմանումը, մենթորի նկարագիրը, գրույցի անցկացումը հարցերի միջոցով, հարցերի ձևերը և տեխնիկան, խնդիրների արդյունավետ լուծումը, մենթորի և մենթիի համագործակցության սկզբունքները, մենթորության արդյունավետության գնահատումը: «Գործարար կանանց ուղեկցում» (mentorship) պիլոտային այս ծրագրի արդյունքում մասնակից փորձառու գործարար կանայք դասընթացին հաջորդող վեց ամիսների ընթացքում ուղեկցել են սկսնակ գործարարներին որպես մենթորներ (*Հավելված 6*):

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) Հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում ՓՄՁ ԶԱԿ-ի 3 աշխատակիցներ ամփոփել են «Շահութաբեր, ռեսուրսաարդյունավետ կառավարման համակարգ» (ProREMaS) ծրագրի դասընթացային և խորհրդատվական փուլը ՀՀ Կոտայքի մարզի 7 ՓՄՁ սուբյեկտների համար: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ևս մեկ դասընթաց Վայոց Ձորի մարզի 7 ընկերությունների համար: Դասընթացն ուղղված է ընտրված փոքր և միջին ձեռնարկություններում ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, մրցունակության բարձրացմանը և վաճառքի ծավալների աճին՝ միևնույն ժամանակ կրճատելով նրանց հումքի, էներգիայի և կոշտ թափոնների ծախսերը: Դասընթացի նպատակն է կազմակերպություններում ռեսուրսների անարդյունավետ օգտագործման հետևանքով առաջացող ծախսերի վերհանումը, ռեսուրսների կառավարման բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը և ռեսուրսարդյունավետ նորամուծությունների խթանումը:

«Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում ս.թ. հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 7-ը ՀՀ Տավուշի մարզի Իջևան և Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքներում կազմակերպվել են դասընթացներ «Համակարգչային գրագիտությունը Հայաստանի գործարար կանանց համար» թեմայով: Դասընթացները անցկացվել են երկու փուլով՝ հիմնարար (basic) և խորացված (advanced), յուրաքանչյուրը 2 օր/8 ժամ տևողությամբ, որոնց մասնակցել է 23 կին: Դասընթացի հիմնական նպատակն էր օգնել գործարար կանանց համակարգչային գիտելիքները և ավելի անդյունավետ դարձնել ձեռնակատիրական գործունեությունն իրականացնելիս (*Հավելված 6*):

ՄԱԿ ՓՀԳ-ի և Հայկական կարմիր խաչի ընկերության հետ համատեղ 2014 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը «Եկամտաբեր գործունեության խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է երեք մեկօրյա դասընթաց, որոնց մասնակցել է 47 սիրիահայ գործարար և փախստական: Դասընթացի հիմնական թեմաներն էին. ձեռնարկատիրական գործունեությունը Հայաստանում, մարքեթինգ, կառավարում, բիզնես պլանավորում, ՀՀ հարկային օրենսդրություն (*Հավելված 6*):

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի, Հայաստանում Ֆրանսիայի իմիգրացայի և ինտեգրման գրասենյակի և Զբաղվածության պետական գործակալության հետ համատեղ իրականացվող «Ինքնագբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրության աջակցություն» ծրագրի շրջանակներում Զբաղվածության պետական գործակալության կողմից ՀՀ բոլոր մարզերից և Երևան քաղաքից ուղղորդված 61 անմրցունակ անձանց համար ս.թ. դեկտեմբերի 1-16-ը կազմակերպվել է դասընթաց/խորհրդատվություն «Գործարար ծրագրի կազմում» թեմայով: Դասընթացի արդյունքում մասնակիցները ՓՄՁ ՋԱԿ-ի մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի փորձագետների օգնությամբ կազմել են գործարար ծրագրեր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով:

Ս.թ. դեկտեմբերի 25-27-ը կազմակերպվել է Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից իրականացվող «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի դասընթացավարների վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների 8 ներկայացուցիչ:

### **«Աջակցություն սիրիահայերին» ծրագիր**

2014 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը շարունակում է տրամադրել աջակցություն սիրիահայ գործարարներին: Հաշվետու ժամանակահատվածում «Աջակցություն սիրիահայերին» ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծված սիրիահայ գործարարների տվյալների շտեմարանում առկա տվյալները համալրվել են և ներկայումս այդ ցանկում ներգրավված են մոտ 480 սիրիահայ գործարարներ: Գրասենյակ այցելող սիրիահայ գործարարներին տրամադրվել է խորհրդատվական, տեղեկատվական, ուսուցողական և անհրաժեշտ այլ աջակցություն:

Ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի (ՄԱԿ ՓՀԳ) աջակցությամբ իրականացվել է երեք «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագիր, որոնց մասնակցել են 57 սիրիահայ գործարար: Ծրագրի արդյունքում մշակված գործարար ծրագրերից լավագույն և իրատեսական 11-ը ներկայացվել են ֆինանսավորման սկսնակ գործարարների ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում (*Հավելված 2.1*):

ՄԱԿ ՓՀԳ-ի հետ համատեղ ս.թ. հուլիսի 4-ին և 11-ին կազմակերպվել են դասընթաց-սեմինարներ 50 սիրիահայ գործարարների համար, որոնց ընթացքում քննարկվել են հարցեր Հայաստանում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս առաջացող խնդիրների և դրանց լուծման, ՀՀ հարկային օրենսդրության ու հարակից

հարցերի, ինչպես նաև իրացման և անշարժ գույքի շուկայի (վաճառք/վարձակալություն), հումքի և սարքավորումների ձեռքբերման/ներմուծման վերաբերյալ (Հավելված 6):

Վերոհիշյալ համագործակցության շրջանակներում հոկտեմբերի 17-ին կազմակերպվել է գործարար հանդիպում թեթև արդյունաբերության ոլորտում գործող տեղացի և սիրիահայ գործարարների մասնակցությամբ, որին մասնակցել են նաև գործարարությանն աջակցող տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնավորապես՝ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ից, Արդյունաբերության զարգացման հիմնադրամից, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակից, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունից և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության միջազգային արդյունաբերական համագործակցության կենտրոնից:

ՄԱԿ ՓՀԳ-ի հետ համատեղ ս.թ. դեկտեմբերի 13-ին կազմակերպվել է «Հանրային գնումների ընթացակարգեր» թեմայով դասընթաց, որին մասնակցել են 23 սիրիահայ գործարարներ: Մասնակիցներին ներկայացվել են ՀՀ օրենքը «Գնումների մասին», գնման գործընթացի կարգավորման և համակարգման կարգը, գնումների ընթացակարգերը և կիրառման պայմանները, ինչպես նաև քննարկվել են հարցեր գնման գործընթացին մասնակցելիս առաջացող խնդիրների և դրանց լուծման վերաբերյալ (Հավելված 6):

ՄԱԿ ՓՀԳ-ի հետ համատեղ ս.թ. դեկտեմբերի 20-ին կազմակերպվել է «Հանրային կապերը ՓՄՁ-ների համար» թեմայով դասընթաց, որին մասնակցել են 15 սիրիահայ գործարարներ: Մասնակիցներին ներկայացվել են հանրային կապեր (PR) հասկացությունը և դրանց գործառույթները, ապրանքների և ծառայությունների առաջխաղացումը PR գործիքների միջոցով:

*Հաշվետու ժամանակահատվածում գործարար ուսուցում, խորհրդատվություն և տեղեկատվության տրամադրման ուղղություններով, ընդհանուր առմամբ, գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 13564 աջակցություն, այդ թվում՝ 500-ը՝ ուսուցողական աջակցության ծրագրի շրջանակներում:*

***«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:***

## **7. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն**

### **7.1 Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն**

2014 թվականի ընթացքում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 225 սկսնակ գործարարներ: Ստացված

վարկերի ընդհանուր գումարը կազմել է 791.9 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 800.1 մլն ՀՀ դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով (Հավելված 7.1):

Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 3.5 մլն ՀՀ դրամ, վարկային միջոցների միջին գումարը՝ 3.5 մլն ՀՀ դրամ:

Ստացված հայտերի դասակարգումը, ըստ հաջորդական փուլերի, ներկայացված է ստորև.

	հատ
Ընդունված գործարար ծրագրերի ընդհանուր քանակը	<u>388</u>
Հաստատված և ընթացիկ փուլում գտնվող գործարար ծրագրերի քանակը	<u>54</u>
Մերժված կամ շահառուների կողմից չեղարկված գործարար ծրագրերի քանակը	<u>109</u>
Ֆինանսավորված գործարար ծրագրերի քանակը	<u>225</u>

**Տրամադրված երաշխավորություններն ըստ տարիների**

*/մլն դրամ/*

	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Երաշխավորություն	30.2	44.8	109.4	53.5	37.4	268.4	798.1	800.1
Վարկ	25.3	37.4	91.5	44.8	31.2	262.6	789.4	791.9
Քանակ	35	41	65	30	17	120	224	225

**Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներն ըստ մարզերի**

Մարզ	Քանակ	Վարկի գումար	Երաշխավորություն
Երևան	53	226,948,333	228,765,347
Գեղարքունիք	21	75,565,000	76,418,028
Արագածոտն	7	25,803,500	26,119,070
Արմավիր	17	64,660,200	65,352,531
Լոռի	19	63,516,100	64,237,267
Սյունիք	14	45,844,000	46,345,448
Կոտայք	12	39,700,000	40,160,750
Շիրակ	21	63,341,040	64,068,279
Վայոց Ձոր	8	23,400,000	23,657,305
Տավուշ	38	109,835,680	111,078,551
Արարատ	15	53,305,190	53,904,594
<b>Ընդամենը</b>	<b>225</b>	<b>791,919,043</b>	<b>800,107,170</b>

7.2. ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր

2014 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում տրամադրվել է 132 մլն ՀՀ դրամի երաշխավորություն 10 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 299 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ:

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 30 մլն ՀՀ դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 13 մլն ՀՀ դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 12%: Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորությունների երաշխիքով միջին ապահովվածությունը կազմել է 47%: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր ՓՄՁ Ներդրումներ ՈւՎԿ-ի (7), ՎՏԲ-Հայաստան քանկի (1), Ինեկոքանկի (1) և Էյչ-Էս-Բի-Սի քանկի (1) միջոցով: Տրամադրված երաշխավորությունների թիվը, ըստ մարզերի, կազմում է. Երևանում՝ 2, Արագածոտնում՝ 1, Արարատում՝ 1, Սյունիքում՝ 1, Գեղարքունիքում՝ 1, Արմավիրում՝ 2 և Տավուշում՝ 2:

2014 թվականի ընթացքում վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում աջակցություն ստանալու հայտեր են ներկայացրել 11 ՓՄՁ սուբյեկտ: Ստացված հայտերի դասակարգումը, ըստ հաջորդական փուլերի, ներկայացված է ստորև.

	/հատ/
<b><u>Բավարարված և վարկային երաշխավորություն ստացած հայտեր</u></b>	<b><u>10</u></b>
<i>Բանկերի կողմից նախնական և վարկային կոմիտեով մերժված հայտեր</i>	<b>0</b>
<i>Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մերժված և լրացուցիչ պարզաբանման ուղարկված հայտեր</i>	<b>1</b>
<i>Շահառուների կողմից ներկայացված հայտեր, որոնք հետագայում հրաժարվել են վարկավորվելուց</i>	<b>0</b>
<i>Ընթացիկ փուլում գտնվող հայտեր</i>	<b>0</b>
<b>Ընդհանուր հայտերի քանակը</b>	<b>11</b>

**ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի ցուցանիշները**

*Տրամադրված երաշխավորություններն ըստ մարզերի*

Մարզ	Քանակ	Վարկ	Երաշխավորություն	Ապահովվածության % (միջին)	Վարկի տոկոս (միջին)	Միջին ժամկետայնություն (ամիս)
Գեղարքունիք	1	48,000,000	11,650,000	24.27	12	60
Արմավիր	2	43,500,000	26,460,000	63	15	48
Երևան	2	56,000,000	29,020,000	53	12	60
Արագածոտն	1	19,900,000	10,000,000	50.25	11	60
Արարատ	1	8,000,000	4,480,000	56	12	60
Տավուշ	2	27,000,000	9,170,000	34.3	13	60
Սյունիք	1	96,646,100	41,126,000	42.5	10	60
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>299,046,100</b>	<b>131,906,000</b>	<b>47</b>	<b>12</b>	<b>57</b>

*Տրամադրված երաշխավորություններն ըստ տարիների*

*/մլն դրամ/*

	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Երաշխավորություն	25.5	197.6	342.2	375.7	213	246.5	63.5	52.1	166.1	125.9	132
Վարկ	47.3	366.1	628.1	722.7	391.1	435.2	136.3	90.9	285.5	314.7	299

*Տրամադրված երաշխավորություններն ըստ գործընկեր բանկերի*

Բանկ	Քանակ	Վարկ	Երաշխավորություն	Ապահովվածության %
ՎՏԲ-Հայաստան բանկ	1	16,500,000	11,460,000	70%
Ինեկոբանկ	1	27,000,000	15,000,000	55.5%
ՓՄՁ Ներդրումներ ՈԻՎԿ	7	158,900,000	64,320,000	44%
Էյչ-Էս-Բի-Սի	1	96,646,100	41,126,000	42.5%
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>299,046,100</b>	<b>131,906,000</b>	

*«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրով «ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն» ծրագրի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:*

## 8. Կանանց ձեռներեցությանն աջակցություն

Ասիական զարգացման բանկի (ADB) տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվող «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագիրը մեկնարկել է 2013թ. մարտի 1-ից և ավարտվելու է 2015 թ. դեկտեմբերին: Ծրագրի նպատակն է բարելավել կանանց ձեռնարկատիրական կարողությունները և բարձրացնել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը կին գործարարների համար: Ծրագիրն իրականացնող կազմակերպությունն է գերմանական «Փեմ Քրնսալթ» ընկերությունը:

Ծրագրի շրջանակներում 2014 թվականի ընթացքում իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագիր հինգ վայրերում՝ Երևանում, ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Կոտայքի մարզի Եղվարդ, Գեղարքունիքի մարզի Մարտունի և Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքներում, որոնց 108 մասնակիցներից 59-ը (55%)՝ կանայք են (*Հավելված 2.1*):

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել կանանց ձեռներեցության զարգացման ռազմավարության ուղղությամբ: Ռազմավարությունը մշակվել է 2013-ի վերջին, իսկ 2014 թվականի մարտի 18-ին ռազմավարության գործողությունների պլանը ներկայացվել է ոլորտի դերակատարներին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակում կազմակերպված աշխատանքային հանդիպման ընթացքում, որտեղ նաև քննարկվել է ծրագրի շրջանակներում մշակված Հայաստանում կանանց ձեռներեցության զարգացմանն ուղղված ռազմավարության ընթացիկ գործողությունները և հետագա համատեղ ծրագրերը: Հանդիպմանը մասնակցել են միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ Հայկական զարգացման գործակալության, Արդյունաբերության զարգացման հիմնադրամի, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO), ԱՄՆ ՄԶԾ-ի Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» ծրագրի (USAID/EDMC), Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի և այլ ծրագրերի ներկայացուցիչներ: Մասնակիցները ներկայացրել են իրենց կողմից իրականացվող ծրագրերը, համագործակցության ուղղությունները, ինչպես նաև պատրաստակամություն են հայտնել Հայաստանում կանանց ձեռներեցության զարգացմանն ուղղված ռազմավարական գործողությունների իրականացման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբի կազմում իրենց ներգրավվածության վերաբերյալ:

Ս.թ. մայիսի 21-ին և 23-ին Շիրակի մարզի Գյումրի և Լոռու մարզի Վանաձոր քաղաքներում կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ արտադրության և ծառայության ոլորտներում գործող 27 գործարար կանանց հետ: Հանդիպման նպատակն էր ծանոթանալ գործարարությամբ զբաղվող կանանց կարիքներին և վերջիններիս ներկայացնել Հայաստանում կանանց ձեռներեցության զարգացմանն ուղղությամբ միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին: Հանդիպման արդյունքները կնպաստեն կանանց ձեռներեցության զարգացմանն ուղղությամբ Հայաստանում իրականացվող ծրագրերի վերաբերյալ գործարար կանանց տեղեկացվածության ինչպես նաև այդ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:



Հաշվետու ժամանակահատվածում «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել բիզնես մենթորների ինստիտուտի ձևավորման ուղղությամբ: Մասնավորապես, մշակվել է փորձնական ծրագիր, որտեղ բիզնես մենթորները կարևոր դերակատարում կունենան սկսնակ գործարարներին աջակցելու հարցում: Մենթորները կայացած և փորձառու գործարարներ են, որոնք կուղղորդեն սկսնակ գործարարներին մարքեթինգային հետազոտությունների անցկացման, գործարար կապերի հաստատման, իրավական և հարկային խորհրդատվության տրամադրման, պետական կառույցներում շահերի ներկայացման, ֆինանսական ռեսուրսների ներգրավման և այլ անհրաժեշտ ուղղություններով: Ծրագրի «Գործարար կանանց ուղղորդում» պիլոտային միջոցառման արդյունքում դասընթացին մասնակից փորձառու և սկսնակ գործարար կանայք ստեղծեցին մենթոր/մենթի զույգեր: Փորձառու գործարար կանայք առաջիկա 6 ամիսների ընթացքում կուղղորդեն սկսնակ գործարար կանանց որպես մենթորներ: Ս.թ. օգոստոսի 21-25-ը անցկացվել է մենթոր/մենթի համագործակցության ծրագրային միջոցառման մոնիթորինգ, որի ընթացքում և մենթորները, և մենթիները պատասխանել են մի շարք հարցերի և դրանց արդյունքում ամփոփվել են արդյունքները և արվել եզրակացություններ համագործակցության ուղղությունների և դրանց արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է կին գործարարների կարիքների ուսումնասիրություն, որի նպատակն էր բացահայտել ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող աջակցության ուղղությունների արդյունավետությունը, հստակեցնել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս նրանց մոտ առաջացող խնդիրները և առաջարկել դրանց հաղթահարման հնարավոր ուղիները: Հաշվետու ժամանակահատվածում ընտրվել է հետազոտության մեթոդաբանությունը, մշակվել է հարցաթերթիկը և կազմակերպվել է ուսումնասիրություն, որին մասնակցել են 744 կին գործարարներ Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից: Ուսումնասիրության շրջանակներում կազմակերպվել են նաև կին ձեռներեցների 5 ֆոկուս խմբերի քննարկումներ ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Լոռու և Վայոց Ձորի մարզերում: Վերլուծության արդյունքները ամփոփվել են և կներկայացվեն ոլորտի ակտիվ դերակատարներին:

Իրականացվել են նաև կանանց ձեռներեցության ներուժի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություններ ՀՀ Լոռու և Վայոց Ձորի մարզերի տուրիզմի արժեշղթայում: Ուսումնասիրություններն ուղղված են արժեշղթայի վերլուծությանն ու արժեշղթայում կին գործարարների ներգրավվածության բացահայտմանը: Վերլուծության արդյունքում բացահայտվել են երկու տարածաշրջաններում տուրիզմի արժեշղթային բնորոշ ուժեղ և թույլ կողմերը և ի հայտ են բերվել նախաձեռնություններ, որոնք կնպաստեն ինչպես արժեշղթայի, այնպես էլ, մասնավորապես, կանանց գործարարության զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի՝ ֆինանսական աջակցության գործիքները: Մշակվել են նախաձեռնություններ այդ գործիքների բարելավման, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ:

ՀՀ վարչապետի 2014 թվականի «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանավայելի գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետը հայտարարել է 2014 թվականի «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխությունը հետևյալ 6 անվանակարգերով.

- «Լավագույն կին գործատու»
- «Լավագույն կին նորարար»
- «Լավագույն կին բարեգործ»
- «Լավագույն ապրանքանիշ»
- «Լավագույն երիտասարդ կին գործարար»
- «Լավագույն սկսնակ կին գործարար»:

Մրցանակաբաշխության կազմակերպչական աշխատանքները իրականացվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից: Մասնավորապես, ս.թ. փետրվար-մարտ ամիսներին կատարվել է հետևյալ աշխատանքը. լրամշակվել է «Լավագույն կին գործարար» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության հայեցակարգը և անցկացման կարգը, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի, ինչպես նաև մի շարք լրատվամիջոցների կայք-էջերում հրապարակվել է մրցանակաբաշխության մասին հայտարարությունը, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակում և մարզային մասնաճյուղերում կազմակերպվել են մրցանակաբաշխությանը մասնակից կին գործարարների հայտերի հավաքագրման և ճշգրտման աշխատանքները:

Ընդհանուր առմամբ ներկայացվել է 182 հայտ, որոնցից 37-ը՝ Երևանից և 145-ը՝ ՀՀ մարզերից: Մրցույթն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, ինչպես նաև ելնելով մրցանակաբաշխության անցկացման կարգի համապատասխան դրույթից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մշակվել են ներկայացված բոլոր հայտերը, կատարվել դրանց վերլուծություն և պատրաստվել համառոտ տեղեկատվություն՝ ըստ յուրաքանչյուր անվանակարգի: Այդ տեղեկատվությանը ծանոթանալու նպատակով, նախապես էլեկտրոնային փոստի միջոցով հանձնաժողովի անդամներին ներկայացվել է յուրաքանչյուր անվանակարգի ցանկը՝ Երևանի և մարզերի համար: Մրցանակաբաշխության արդյունքները ամփոփվել են ս.թ. մարտի 21-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի նիստերի դահլիճում կազմակերպված մրցութային հանձնաժողովի նիստի ընթացքում: Մրցութային հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր անվանակարգի համար շնորհվել է 2-ական մրցանակ՝ Երևան քաղաքի և ՀՀ մարզի լավագույն կին գործարարներին:

Ապրիլի 5-ին Հայաստանի ազգային պատկերասրահում տեղի ունեցած ՀՀ վարչապետին կից Կանանց խորհրդի հանդիսավոր նիստի ընթացքում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը պատվոգրեր հանձնեց «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության 12 հաղթողներին: Խրախուսական պատվոգրեր, նվերներ և մրցանակներ հանձնեցին նաև միջազգային մի

շարք կազմակերպություններ՝ Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպությունը (GIZ), ԱՄՆ ՄԶԾ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիրը (USAID/PRP), ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից իրականացվող «Երիտասարդ ձեռներեցիներին աջակցություն» ծրագիրը, Ասիական զարգացման բանկի (ADB) «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագիրը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (UNDP), Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Վերակառուցման զարգացման եվրոպական բանկի (EBRD) Գործարարության աջակցության գրասենյակը և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը (UNHCR):

*«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրով «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:*

***9. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում***

ՓՄՁ պետական աջակցության ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով 2014 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համագործակցություն է հաստատել նոր կազմակերպությունների հետ:

*Առանձին ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները ներկայացվում են ստորև.*

**«Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ՄԱԶԾ/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համատեղ ծրագիր**

«Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ՄԱԶԾ /Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համատեղ ծրագիրն իրականացվում է սկսած 2004 թ.-ից: Ծրագրի հիմնական նպատակն է երկրում փոքր և միջին ձեռնարկատիրության ակտիվացման նպաստումը, տարածքային համաչափ զարգացման ապահովումը, զբաղվածության և ինքնազբաղվածության մակարդակի աճը, աղքատության կրճատումը: Ծրագիրն իրականացվում է ՄԱԶԾ-ի կողմից տարեկան աշխատանքային ծրագրերի միջոցով, որոնք մշակվում են ՓՄՁ աջակցության տարեկան ծրագրերի համաձայն:

2014 թվականին որոշակի ճշգրտումներ է մտցվել ծրագրում՝ առավելապես կենտրոնանալով սոցիալապես խոցելի խմբերի և տարածքային անհամաչափ

գարգացումները հաղթահարելու վրա՝ կարևորելով հատկապես սահմանամերձ համայնքներում իրականացվող ծրագրերը, ինչպես նաև ընդառաջ գնալով երկրում նախաձեռնվող տեղական ինքնակառավարման բարեփոխումներին, մասնավորապես համայնքների խոշորացման գործընթացին՝ ստեղծելու և գործարկելու միջհամայնքային տնտեսական գործունեության մոդելներ:

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում **«Տեղական տնտեսական զարգացում»** բաղադրիչի շրջանակներում նախաձեռնվել են մի շարք միջոցառումներ, որոնք առաջարկվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված գյուղական համայնքների զարգացման խնդիրների մասնակցային ախտորոշման արդյունքում:

ՀՀ Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքում ՄԱԶԾ աջակցությամբ հիմնադրված «Արար» սպառողական կոոպերատիվը համալրվել է չրի հավաքման, պահպանման և երկրորդային մշակմանն ուղղված սարքավորումներով:

Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի 6 համայնքներում իրականացվում են հատապտուղների հավաքման և վերամշակման ծրագրի իրագործվելիության հետազոտական աշխատանքներ:

ՀՀ վարչապետի 2014 թվականի «Լավագույն կին-գործարար» մրցանակաբաշխության ընթացքում ՄԱԶԾ-ի կողմից խրախուսական մրցանակի արժանացած ՀՀ Վայոց ձորի մարզում հացի արտադրությամբ զբաղվող երիտասարդ կին սկսնակ գործարար Վարդուհի Օհանյանը ցանկություն է հայտնել ընդլայնել իր գործունեությունը և զբաղվել նաև կարկանդակների, պիցցայի արտադրությամբ՝ արդյունքում շրջանառության ծավալները ավելացնել 30%-ով և ստեղծել 2-3 նոր աշխատատեղ: Համաձայն նրա դիմումի՝ Ծրագրի շրջանակներում համաֆինանսավորման սկզբունքով աջակցություն է ցուցաբերվել համապատասխան վառարանի ձեռքբերման հարցում:

**«Մկանակ գործարարներին խթանում»** բաղադրիչի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզի Կոթի և Չինարի համայնքներում Ծրագրի աջակցությամբ հիմնադրվել են 26 տիպային ջերմոցային տնտեսություններ (կաթիլային ոռոգման համակարգով, 120 ք.մ.): Մեկ ջերմոցի կառուցման ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 1,3 մլն ՀՀ դրամ, որից 400 հազ. ՀՀ դրամը համաֆինանսավորվել է շահառուի կողմից: Տեխնոլոգիական ուսուցումը կազմակերպվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի կողմից:

**«ՓՄՁ ԶԱԿ-ի կարողությունների հզորացում»** բաղադրիչի շրջանակներում իրականացվել է ՓՄՁ ԶԱԿ-ի ներքին կառավարման էլեկտրոնային համակարգի ծրագրավորման և ներդրման համապատասխան աշխատանքներ (իրականացնող՝ «Ինսթիգեյթ Սոֆայլ» ՓԲԸ): Աշխատանքներն ավարտվել են: Հանրային իրազեկման քարոզարշավի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է

- Երկիր Մեդիա հեռուստաընկերությամբ նկարահանված ութ ֆիլմերի հեռարձակում (նախորդ տարում նկարահանած 3 ֆիլմ՝ ջերմոցներ, չրերի արտադրություն, պանրի արտադրություն և 5-ը ընթացիկ տարում նկարահանած), այդ թվում

- Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքում չրի հավաքման կետի գործունեությունը լուսաբանող հոլովակի նկարահանում,
- Եղեգնաձորի, լավաշի և պիցցայի արտադրությամբ զբաղվող կին գործարարի մասին պատմող ֆիլմի ստեղծում,
- Կոթի համայնքի ջերմատնային տնտեսությունների հիմնադրման մասին պատմող ֆիլմի ստեղծում,
- Իջևանի <Անահիտ> հյուրատնային բիզնեսի մասին պատմող ֆիլմի նկարահանում,
- Երևանի <Ստեֆանի-Վան> միկրոֆիրրային գործվածքների, պարագաների արտադրության մասին պատմող ֆիլմի ստեղծում,
- Իջևանի արվեստի փառատոնի աշխատանքները լուսաբանող կատալոգի մշակում և հրատարակում:

**ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացնող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր**

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը 2013թ. օգոստոսի 1-ից ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացնում է «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» 5 տարի տևողությամբ ծրագիրը<sup>3</sup>:

Ծրագրի նպատակը գյուղական համայնքների հզորացումն է, դրանց տնտեսական ներուժի բացահայտման և զարգացման միջոցով, մասնավորապես.

- գյուղական համայնքներում մրցակցային առավելությունների գնահատման հիման վրա տեղական տնտեսական զարգացման նախաձեռնությունների բացահայտում և իրականացում,
- ձեռնարկատիրական հմտությունների զարգացում, օրինակելի բիզնես մոդելների մշակում և տարածում,
- ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովում, շուկաների հասանելիության աջակցություն,
- ենթակառուցվածքների բարելավում,
- համապատասխան գիտելիքների և հմտությունների փոխանցում բնապահպանական միջոցառումների անցկացման և բնական ու մարդածին աղետների կանխարգելման, ռիսկերի կառավարման և նվազեցման վերաբերյալ,
- կանանց և երիտասարդների համար զբաղվածության հնարավորությունների ընդլայնում:

<sup>3</sup> Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հաղթող է ճանաչվել ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից 2012թ. սեպտեմբերի 18-ին հայտարարված “Partnership for Rural Prosperity” դրամաշնորհային ծրագրի մրցույթի արդյունքում: Ծրագիրն իրականացվում կոնսորցիումի կողմից: Գործընկեր կազմակերպություններն են՝ «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը (ԱԳԶԿ), Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատը (ԳԱԱՊ) և «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ն:

**Ծրագրի բաղադրիչներն են.**

**1. Տեղական տնտեսական զարգացում**

- **Ընտրված համայնքներում մրցակցային առավելությունների բացահայտում և խթանում:** Թիրախ համայնքների տնտեսության մասնակցային գնահատում՝ մրցակցային առավելությունները բացահայտելու և նախաձեռնելու տեղական տնտեսական զարգացման (SSQ) այնպիսի գործողություններ, որոնք կնպաստեն տնտեսական և սոցիալական պայմանների, ինչպես նաև ենթակառուցվածքների բարելավմանը:
- **Ձեռներեցության խթանում:** Սկսնակ գործարարների ձեռնարկատիրական կարողությունների հզորացում, նոր տեխնոլոգիաների ներդրման համար մատչելի վարկային և ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում, զբաղվածության նոր հնարավորությունների ստեղծում:
- **Շուկաների հասանելիություն:** Թիրախ համայնքներում գործող ձեռնարկությունների համար շուկաների հասանելիության ապահովում, աջակցություն առևտրին:

**2. Փոքր ենթակառուցվածքների զարգացում**

Նպաստել ընտրված համայնքների ենթակառուցվածքների կատարելագործմանը, ֆերմերների համար արդիականացված գյուղ. ծառայությունների, արտադրության միջոցների և սպառման շուկաների մատչելիության բարձրացմանը, տվյալ համայնքներում գործարար միջավայրի և կենսապայմանների բարելավմանը:

**3. Գյուղական համայնքների բնության պահպանություն**

Կայուն զարգացում ապահովելու նպատակով աջակցել աղետակայուն համայնքների ձևավորմանը, որոնք իրենց զարգացման պլաներում կձեռնարկեն քայլեր ռիսկերի կառավարման ուղղությամբ: Աջակցել բացասական ազդեցության տակ գտնվող համայնքներին՝ բնապահպանական ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացում:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի **«Տեղական տնտեսական զարգացում»** բաղադրիչների շրջանակում PACA գործիքի միջոցով տնտեսության մասնակցային գնահատումներ են իրականացվել 13 համայնքային խմբերում՝ ներառելով 43 համայնքներ: Բացահայտվել են համայնքների տնտեսական զարգացման հեռանկարները և նախաձեռնությունները, որոնք ամփոփվել են համապատասխան հաշվետվություններում (մանրամասները ներկայացված են 4-րդ բաժնում):

Կատարված վերլուծությունները հիմք են ծառայել Ծրագրի թիրախային համայնքներում տնտեսական զարգացման մի շարք միջոցառումների իրականացման համար: Մասնավորապես Ծրագրի թիրախային վայրերում իրականացվել են «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» 8 ծրագրեր (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):

Ծրագրի համար թիրախային ոլորտներ են ճանաչվել **պանրագործությունը, չրերի արտադրությունը, ջերմոցային տնտեսությունները և սառնարանային տնտեսությունները:**

Նշված ոլորտների զարգացման նպատակով, կախված պահանջարկից, կազմակերպվել են նաև տեխնոլոգիական դասընթացներ (մանրամասները ներկայացված են 5-րդ բաժնում):

Նպատակ ունենալով բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների մրցունակությունն ու կենսունակությունը՝ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում: Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է դրամաշնորհների տրամադրման կանոնակարգ, համաձայն որի, դրամաշնորհներ տրամադրվում են «Մկսնակ գործարարների աջակցություն» ծրագրի շրջանակներում գործարար ծրագիրը բարեհաջող պաշտպանած և Ծրագրի թիրախային ոլորտներում գործող ՓՄՁ-ների: Դրամաշնորհները տրվում են նյութերը և/կամ սարքավորումները ձեռք բերելու և շահառուին տրամադրելու միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում 18 ՓՄՁ սուբյեկտներ սարքավորումների/նյութերի ձևով ստացել են դրամաշնորհներ: (մանրամասները ներկայացված են 5-րդ բաժնում):

**«Փոքր ենթակառուցվածքների զարգացում»** բաղադրիչի շրջանակներում իրականացվել են 4 ենթակառուցվածքային ծրագրեր: Այդ թվում՝ Նորաշեն համայնքում ջրարբիացման համակարգի կառուցում, Պտղավան և Դեղձավան համայնքներում ոռոգման ջրագծի անցկացում, Ջորական համայնքում ոռոգման համակարգի ընդլայնում: Եվս 8 ծրագրեր հաստատվել են ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից, որոնց իրականացումը կմեկնարկի 2015թ.-ին, ևս 3 ծրագիր դեռևս գտնվում է մշակման փուլում: Նախագծային, շինարարական և տեխնիկական հսկողության աշխատանքներն իրականացվել են մրցութային կարգով ընտրված կազմակերպությունների միջոցով: Բոլոր ծրագրերի համար մշակվել են շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի պլաններ (ՇՄԿՄՊ), որոնք ներկայացվել են կապալառուներին:

**«Գյուղական համայնքների բնության պահպանություն»** բաղադրիչի շրջանակներում կայուն զարգացում ապահովելու նպատակով աջակցություն է ցուցաբերվում աղետակայուն համայնքների ձևավորմանը, որոնք իրենց զարգացման պլաններում կձեռնարկեն քայլեր ռիսկերի կառավարման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) վերլուծություններ են իրականացվել Ծրագրի թիրախային 17 գյուղական համայնքներում: Վերլուծության հետ միասին համայնքին է հանձնվում նաև իրենց համայնքի աղետների ռիսկերի կառավարման հավաստագիրը:

Բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվելու նաև բացասական ազդեցության տակ գտնվող համայնքներին՝ բնապահպանական ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացում: Բացասական ազդեցության տակ գտնվող համայնքներն ունեն հնարավորություն բնապահպանական ծրագրերի իրականացման համար պետական բյուջեից ստանալ նպատակային հատկացումներ, որոնք առաջանում են տվյալ համայնքներում ձեռնարկությունների բնապահպանական վճարներից: Հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է ցուցաբերվել Սոթք համայնքում աղբավայրի կառուցման և աղբահանության կազմակերպման ծրագրի մշակմանը: Արդեն իսկ ՀՀ բնապահպանության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատվել է աղբահանություն իրականացնող մեքենայի ձեռքբերման ծրագիրը, որը կիրականացվի

2015 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումների հաշվին: Ներկայումս աշխատանքներ են իրականացվում աղբավայրի կառուցման համար ֆինանսական ռեսուրսների ներգրավման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել նաև Ծրագրի բացման արարողությունը, Ծրագրի կառավարման խորհրդի մեկնարկային նիստը, մշակվել և ԱՄՆ ՄԶԳ հաստատմանն է ներկայացվել Ծրագրի 2-րդ տարվա աշխատանքային ծրագիրը, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման պլանը:

**«Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնություն»  
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ համատեղ ծրագիր**

Ծրագրի հիմնական նպատակն է տեղական տնտեսական զարգացման բնագավառում ճապոնական փորձի ուսումնասիրությունը (One Village One Product-OVOP) և ներդրումը Հայաստանում՝ ուղղված համայնքների տնտեսական ներուժի բացահայտմանը, տեղական արտադրանքի որակի բարելավմանը, տեղական նոր ապրանքանիշերի զարգացմանը և առաջնումանը շուկաներում: Ծրագիրը պաշտոնապես մեկնարկել է 2013 մայիսի 14-ին և կտևի մինչև 2016թ.:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի աջակցությամբ Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում իրականացվել է պանրագործության կարիքների գնահատում, անցկացվել են տեխնոլոգիական դասընթացներ պանրագործության վերաբերյալ, մշակվել և տպագրվել է պանրի արտադրության ուղեցույցը: Ձեռք են բերվել պանրի մոդելային ուսումնասարտադրական կենտրոնի համար անհրաժեշտ սարքավորումներ, որոնք նախատեսվում է տրամադրել մրցութային կարգով ընտրված տեղական գործընկերոջը, որը կապահովի ուսումնասարտադրական կենտրոնի բնականոն աշխատանքը և կգրադվի արտադրանքի առաջնուման գործողություններով: Ծրագրի աջակցությամբ մշակվել է նաև պանրի հիմնական ապրանքանիշը, որը ևս տրամադրվելու է տեղական գործընկերոջը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի աջակցությամբ Տավուշի մարզում իրականացվել է տեղում աճեցվող ձիթապտղի վերամշակման կարիքների գնահատում, անցկացվել են տեխնոլոգիական դասընթացներ ձիթապտղի վերամշակման վերաբերյալ: Ձեռք են բերվել ձիթապտղի վերամշակման ուսումնասարտադրական կենտրոնի համար անհրաժեշտ սարքավորումներ, որոնք նախատեսվում է տրամադրել մրցութային կարգով ընտրված տեղական գործընկերոջը, որը կապահովի ուսումնասարտադրական կենտրոնի բնականոն աշխատանքը և կգրադվի արտադրանքի առաջնուման գործողություններով: Ծրագրի աջակցությամբ մշակվել է նաև ձիթապտղի հիմնական ապրանքանիշը, որը ևս տրամադրվելու է տեղական գործընկերոջը:

Ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի Տաթև, Հալիձոր, Տանձատափ և Շինուհայր համայնքներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի և «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի հետ համատեղ սկսվել է նոր նախաձեռնություն՝ նշված տարածաշրջանում հյուրատնային ցանցի ստեղծման և զարգացման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի կողմից վարձվել է խորհրդատվական ընկերություն, որը



տեխնոլոգիական և բիզնես դասընթացներ է իրականացրել տարածաշրջանի թվով 19 (տասնինը) սկսնակ գործարարների համար: Ծրագրի արդյունքում մշակվել է թվով 10 (տաս) գործարար ծրագիր, որոնցից թվով 7 (յոթ) մասնակից դիմել են Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ Սկսնակ գործարարների աջակցության ծրագրերի շրջանակում ֆինանսական աջակցության համար:

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել են նաև փոքր և միջին ձեռնարկատիրությունների, ինչպես նաև ոլորտում կրթական գործունեություն իրականացնող դասընթացավարների համար նախատեսված հետևյալ կրթական նյութերը, որոնք մշակվել են ճապոնացի փորձագետների կողմից.

- «Ապրանքի հատկանիշների պլանավորման միավորված վերլուծություն»,
- «Ինչպես լավ աշխատելով բարելավել որակը» (5Մ-ը որպես ՄԳՄԱ կիրառման մեթոդներից մեկը),
- «Թույլ տվեք, որ Ձեր պատմությունը վաճառի» փոքր բիզնեսի ապրանքանշման արագ ուղեցույց,
- «Խմբային մարքեթինգ»:

Ծրագրի փորձագիտական խմբի կողմից հատուկ փորձագետների համար մշակվել են հետևյալ ուսումնական ձեռնարկները, որոնք վերաբերվում են բիզնեսի կառավարման արդյունավետության բարձրացմանը և շուկայում բիզնեսների առաջնդմանը.

- «ԿԱՅՁԵՆ գործիքներ»,
- «Ապրանքանշում և մերչենդայզինգ»:

#### Ձեռնարկները

Պանիր արտադրող փոքր ընկերությունների և ֆերմերային տնտեսությունների համար հրատարակվել է նաև «ՔԱՐԴ Ագրոսերվիսի» մասնագետների կողմից մշակված «Պանրի արտադրությունը ֆերմերային տնտեսություններում» ուղեցույցը, որը նախատեսված է պանիր արտադրող փոքր ընկերությունների և ֆերմերային տնտեսությունների համար: Յուրաքանչյուր ուղեցույցից տպագրվել է 1000-ական օրինակ, որոնք Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի Կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի միջոցով տրամադրվում են ՓՄՁ-ներին և սկսնակ գործարարներին:

#### ***Խորհրդատվություններ, դասընթացներ և վերապատրաստումներ.***

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի փորձագետների թիմի կողմից անց է կացվել շուկայավարման մեկօրյա դասընթաց Մեղրու տարածաշրջանի 30 (երեսուն) չիր արտադրողների համար: Դասընթացի հիմնական թեմաներն էին «Ինչպես մշակել տարածաշրջանային և անհատական ապրանքանիշեր», «Չրերի նկատմամբ սպառողների նախընտրությունները» և «Ինչպես բարելավել Մեղրու չրերը՝ հիմնվելով հայկական OVOP գաղափարների վրա»:

Տավուշի մարզի Բագրատաշեն համայնքում տեղում աճեցվող ձիթապտղի շուկայահանման և առաջնդման նպատակով հաշվետու ժամանակահատվածում Ծրագիրն ապահովել է տեղական խորհրդատու, որը համայնքում իրականացրել է կարիքների գնահատում, ներկայացրել է ձիթապտղի վերամշակման տիպային փոքր

արտադրամասի համար անհրաժեշտ սարքավորումների ցանկ, ինչպես նաև իրականացրել է տեխնոլոգիական դասընթացներ տեղի 15 (տասնհինգ) արտադրողների համար:

Կարողությունների զարգացման նպատակով ս. թ. հուլիսի 29-ից օգոստոս 10-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և գործընկեր այլ կազմակերպությունների 8 (ութ) ներկայացուցիչներ մասնակցել են Ճապոնիայում իրականացված վերապատրաստման դասընթացի՝ «Տեղական ապրանքների շուկայավարման ճապոնական մեթոդներ և հայկական OVOP հայեցակարգ» թեմայով:

Ս. -7-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ և գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչների համար անց է կացվել դասընթացավարների դասընթաց «Կայզեն գործիքներ (շարունակական բարելավում)» և «Ապրանքանշում և շուկայավարում ՓՄՁ-ների համար» թեմաներով: Դասընթացի մասնակիցների ընդհանուր թիվը 21 (քսանմեկ):

### ***Շուկայավարման հարթակների ստեղծում և գործարկում.***

Շուկայավարման հարթակները հնարավորություն են տալիս տեղական արտադրողներին ներկայացնել իրենց ապրանքները և ծառայությունները պոտենցիալ հաճախորդներին, անմիջականորեն ստանալ նրանց արձագանքները և բարելավել իրենց ապրանքներն ու ծառայությունները: Շուկայավարման հարթակները լինում են միջոցառումների տիպի (ցուցահանդեսներ, փառատոններ, տոնավաճառներ և այլն), խանութի տիպի և ոչ շոշափելի (համացանցային հարթակներ):

Հաշվետու ժամանակահատվածում գործարկվել է «OVOP Armenia» ֆեյսբուքյան էջը, որը ներկայումս ունի 3000-ից ավելի հետևողներ: Էջը օգտագործվում է որպես ոչ շոշափելի շուկայավարման հարթակ, որտեղ ներկայացվում են Ծրագրի շահառու հանդիսացող կազմակերպությունների արտադրանքը/ծառայությունները, Ծրագրի փորձագիտական թիմի կողմից մշակված կրթական նյութերը, ինչպես նաև տարածվում է տեղեկատվություն Ծրագրի գործունեության վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրի շրջանակներում առաջնության համար դիտարկվող հետևյալ ապրանքների և ծառայությունների սպառողական շուկայի ուսումնասիրություններ. *պանիր, չիր, չոր համեմունքներ և աղացած կարմիր պղպեղ, գինի, մսամթերք, տուրիզմ և ձիթապտուղ:* Ուսումնասիրություններն անց են կացվել հարցումների միջոցով՝ տարբեր սեռատարիքային խմբերում (հաշվի են առնվել ապրանքների և ծառայությունների յուրահատկությունները): Յուրաքանչյուր ապրանքի և ծառայության համար հարցվել է 200-ական մարդ: Ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվել են համապատասխան հաշվետվություններում, որոնք տրամադրվում են բոլոր շահագրգիռ կողմերին:

Վերոնշյալ ուղեցույցները և ուսումնասիրությունների հաշվետվությունները հասանելի են նաև էլեկտրոնային տարբերակով՝ ծրագրի «OVOP Armenia» ֆեյսբուքյան էջում (ծանոթանալու համար հետևեք հղմանը՝ <https://www.facebook.com/ovop.arm/notes>) :

Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել է նաև հյուրատնային ծառայությունների վերաբերյալ շուկայի ուսումնասիրություններ, որը կատարվում է նաև Ծրագրի ֆեյսբուքյան էջի միջոցով: Ուսումնասիրության արդյունքները նախատեսվում է ամփոփել

Հաշվետու ժամանակահատվածում 8 (ութ) գործարարներ նախապատրաստվել և ներկայացել են ս.թ. հոկտեմբերի 10-ին Երևանում կայացած «Գյուղական կյանքի և գյուղական ավանդույթների փառատոնի» շրջանակում նախատեսված ցուցահանդես-վաճառքին: Նախաձեռնությունն իրականացվել է Ծրագրի և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի աջակցությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Լոռու մարզում գործող 8 (ութ) հյուրատների համար Ծրագրի կողմից մշակվել և հրատարակվել են գովազդային բուկլետներ, որոնք նախատեսվում է տարածել տարբեր տուրիստական կազմակերպությունների, հյուրանոցների և միջոցներով:

### **Սևծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագիր**

1) *«Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը՝ որպես որոշիչ գործոն Սևծովյան տարածաշրջանում մրցակցության խթանման համար» (LRED Net)* ծրագրի ընդհանուր համակարգումն իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից: Մասնակից երկրներն են՝ Հունաստանը, Վրաստանը, Բուլղարիան և Մոլդովան: Ծրագրի նպատակն է ուսումնասիրել մասնակից երկրների տեղական տնտեսական զարգացման (SSՁ) նախաձեռնությունները, առկա ծրագրերն ու գործիքները, ապահովել փորձի և գիտելիքների փոխանակում SSՁ ծրագրերի վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում կբացահայտվեն նաև ծրագրի մասնակից համայնքների/տարածաշրջանների մրցակցային առավելությունները և կմշակվեն արժեքային շղթաներ մասնակից երկրների միջև: Առևտրային կապերի զարգացման նպատակով աջակցություն կցուցաբերվի գործարար կապերի և համագործակցության հաստատման գործում: Ծրագրի բյուջեն կազմում է 473,2 հազ. եվրո, այդ թվում՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի բյուջեն՝ 103.04 հազ. եվրո:

Ծրագիրը պաշտոնապես մեկնարկել է 2013թ. հուլիսի 1-ից և կտևի մինչև 2015թ. հունիսի 30-ը:

Հաշվետու ժամանակահատվածում կայացել են ցանցային հանդիպումներ՝ Մոլդովայի մայրաքաղաք Քիշնևում, Հունաստանի Կատերինի և Բուլղարիայի Վառնա քաղաքներում: Նշված հանդիպումների ընթացքում քննարկվել են ծրագրային մի շարք խնդիրներ:

Ծրագրի մասնակից կազմակերպություններն իրենց ազգային լեզուներով թարգմանել և շահառուների շրջանում տարածել են PACA ուղեցույցը, որը նախապես հայերեն լեզվով մշակվել և անգլերեն լեզվով թարգմանվել էր ծրագրի մասնակից՝ Գեդարքունիքի առևտրաարդյունաբերական պալատի կողմից: Ծրագրի պահանջների համաձայն, ծրագրի մասնակից յուրաքանչյուր կազմակերպության կողմից ընտրվել են 3 տարածքներ, որտեղ տեղական թիմի համար PACA գործիքների վերաբերյալ անցակցված վերապատրաստման արդյունքում մեկնարկել են SSQ միջոցառումները:

2) Սնծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը որպես գործընկեր մասնակցում է նաև *«Տարածաշրջանային բիզնես ինկուբատորների ցանց» (Balck Sea BI-Net) ծրագրին*: Ծրագրի նպատակն է ուսումնասիրել և ներդնել ծրագրի մասնակից երկրների փորձը բիզնես ինկուբատորների ստեղծման և կառավարման բնագավառում, ստեղծել ինկուբատորների տարածաշրջանային ցանց: Ծրագրի համակարգողն է Մոլդովայի ՓՄՁ զարգացման գործակալությունը (ODIMM), մասնակից երկրներն են՝ Հունաստանը, Ռումինիան, Հայաստանը, Ուկրաինան և Թուրքիան: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի բյուջեն՝ կազմում է 105.35 հազ. եվրո: Ծրագիրը պաշտոնապես մեկնարկել է 2013թ.-ի մարտի 27-ին և կտևի մինչև 2015թ. մարտի 27-ը:

Ծրագրի շրջանակներում ս.թ. ապրիլի 13-17-ը Մոլդովայի Քիշնև, և հուլիսի 15-19-ը Հունաստանի Սալոնիկ քաղաքներում կազմակերպվել է 2 ուսումնական այց, որոնց ընթացքում մասնակիցներին ներակայացվել է բիզնես ինկուբատորների ստեղծման և զարգացման մոլդովական և հունական փորձը, այցելություններ են կազմակերպվել գործող բիզնես ինկուբատորներ:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է Ծրագրի ինտերնետային կայքը, որի շնորհանդեսը տեղի է ունեցել ս.թ. մայիսի 12-14-ին Ռումինիայի Գալաց քաղաքում կազմակերպված Ծրագրի համակարգողների հանդիպման ընթացքում:

**«Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համատեղ ծրագիր**

2013թ. մարտի 20-ից մեկնարկված «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ծրագրի հիմնական նպատակն է՝ աջակցության ցուցաբերումը երիտասարդ գործարարներին:

**Ծրագրի հիմնական ուղղություններն են.**

- Երիտասարդ գործարարներին տեղեկատվական և խորհրդատվական (տեխնիկական) աջակցության տրամադրում,
- Երիտասարդ գործարարներին ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում,
- գործարար հմտությունների և գիտելիքների մակարդակի բարձրացում,

➤ երկրում բարենպաստ բիզնես միջավայրի ապահովում:

Ծրագրի շրջանակներում ընտրված երիտասարդ գործարարներին տեխնիկական և ֆինանսական աջակցությունը կտրամադրվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից արդեն իսկ փորձարկված մեթոդների և գործիքների միջոցով, ներառյալ՝ ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասըթացներ, գործարար ծրագրերի մշակում, անհատական խորհրդատվություններ, վարկային երաշխավորությունների տրամադրում առավել իրատեսական գնահատված ծրագրերին և այլն:

Ծրագրի ընթացքում նախատեսվում է իրականացնել **25** «Սկսնակ գործարարների աջակցության ծրագրեր» շուրջ **300 սկսնակ երիտասարդ գործարարների** մասնակցությամբ և արդյունքում ունենալ առնվազն **80** ֆինանսավորված գործարար ծրագրեր:

**Ծրագրի ընդհանուր տևողությունը** 44 ամիս է: Ծրագրի ֆինանսավորումը իրականացվում է Ավստրիայի կառավարության կողմից:

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են երիտասարդների մասնակցությամբ «Սկսնակ գործարարների աջակցության» 8 ծրագրեր (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):

### **SZՉԿ ֆինանսավորմամբ իրականացվող «Փոքր և միջին ձեռնարկություններում բնապահպանական գործունեության խրախուսում» ծրագիր**

«Փոքր և միջին ձեռնարկություններում բնապահպանական գործունեության խրախուսում» ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD/SZՉԿ) միջև ս.թ. հունվարի 31-ին ստորագրված պայմանագրի շրջանակներում ԵՄ նախաձեռնության (EaP GREEN)<sup>4</sup> ներքո իրականացվել է ուսումնասիրություն ՓՄՁ-ների շրջանում:

Ուսումնասիրությունն ունի հետևյալ նպատակները.

- բացահայտել ՓՄՁ-ների բնապահպանական գործելակերպի բարելավման հիմնական հնավորությունները և խոչընդոտները՝ ներառյալ ռեսուրսախնայող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և բիզնես պրակտիկայի կիրառումը:
- խթանել կառավարություն-բիզնես և բիզնես-բիզնես երկխոսությունը ԵՄ Արևելյան գործընկերության երկրներում կայուն արտադրության օգուտների մասին՝ հաշվի առնելով կանաչ շուկաների կարևորության աճը:

Ուսումնասիրությունն անցկացվել է 416 ՓՄՁ-ների շրջանում՝ ընտրված հետևյալ ոլորտներից.

- Գյուղատնտեսություն, ձկնաբուծություն (17),
- Հանքարդյունաբերություն (15),
- Արտադրություն (227),

<sup>4</sup> Սույն նախաձեռնությունը վերաբերում է «Կանաչ տնտեսությունն Արևելյան գործընկերության երկրներում» ծրագրի գործողություններին. կայուն արտադրության և սպառման զարգացման ծրագրեր, կանաչ գնումների փորձի խրախուսում (իրականացնում է UNEP-ը) և ռեսուրսախնայողություն և մարքուր արտադրություն սննդի, խմիչքների, քիմիական և շինարարության ոլորտներում (իրականացնում է UNIDO-ն):

- Շինարարություն (57),
- Հյուրընկալության ծառայություններ և հասարակական սնունդ (100)

Նշված ոլորտների ՓՄՁ-ներում անցկացվել են հարցումներ՝ ըստ ՏՀԶԿ-ի մշակված հարցաթերթի: Հարցումներն անցկացվել են հեռախոսազանգերի և այցելությունների միջոցով:

Ա.թ. հունիսի 4-ին Ծրագրի շրջանակներում անց է կացվել 2-րդ աշխատաժողովը, որը կազմակերպվել էր համատեղ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից: Աշխատաժողովի հիմնական նպատակներն էին՝ ներկայացնել ՓՄՁ-ների բնապահպանական գործելակերպի բարելավման հիմնական հնավորությունների և խոչընդոտների վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև քննարկել ՓՄՁ-ներում կանաչ փորձի (Green Practices) ներդրման հնարավոր մեխանիզմները և վերջիններիս անհրաժեշտությունը: Աշխատաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ ՀՀ շահագրգիռ նախարարություններից, գործարարությանն աջակցող կառույցներից, միջազգային կառույցներից, հասարակական կազմակերպություններից և այլն:

ՏՀԶԿ-ի կողմից կմշակվեն և ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կներկայացվեն առաջարկություններ՝ ուղղված ՓՄՁ-ներում կանաչ գործելակերպի խթանման նպատակով երկրում բարեփոխումների իրականացմանը: Առաջարկությունների նախնական տարբերակը քննարկվել է Ա.թ. նոյմբերի 7-ին կազմակերպված «Դեպի կանաչ տնտեսություն» 3-րդ ազգային կոնֆերանսի ընթացքում, որը նախաձեռնվել էր Գործատուների հանրապետական միության կողմից:

### **Միջազգային և տեղական այլ ծրագրերի հետ համագործակցություն**

**Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) Հայաստանյան** գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում ՓՄՁ ԶԱԿ-ի 3 աշխատակիցներ ամփոփել են «Շահութաբեր, ռեսուրսաարդյունավետ կառավարման համակարգ» (ProREMaS) ծրագրի դասընթացը ՀՀ Կոտայքի մարզի 7 ՓՄՁ սուբյեկտների համար: Հաշվետու ժամանակաշրջանում ևս մեկ դասընթաց է կազմակերպվել Վայոց Ձորի մարզի 7 և Երևանի 2 ընկերությունների համար: ՓՄՁ ԶԱԿ-ի ևս 10 աշխատակիցներ մասնակցել են «Շահութաբեր, ռեսուրսաարդյունավետ կառավարման համակարգ» (ProREMaS) ծրագրի դասընթացին: Դասընթացն ուղղված է ընտրված փոքր և միջին ձեռնարկություններում մրցունակության բարձրացմանը և վաճառքի ծավալների աճին՝ միևնույն ժամանակ կրճատելով նրանց հումքի, էներգիայի և կոշտ թափոնների ծախսերը:

**Գերմանական տնտեսական միավորման** հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից աջակցություն է ցուցաբերվել Գերմանիայում հայ գործարարների գործարար կապերի հաստատման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և շուրջ 3000 գործարարների շրջանում տարածվել է հայ-գերմանական 3 գործարար տեղեկաթերթ, որը ներառում է գործարար համագործակցության առաջարկներ գերմանական ընկերությունների կողմից, օգտակար տեղեկատվություն հայ-գերմանական գործարար միջավայրի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն՝ Հայաստանում Գերմանական տնտեսական միավորման մասին: Արդեն իսկ ստացվել են հետաքրքրության առաջարկներ և կոնտակտային տվյալներ են փոխանակվել 12 գործարարների միջև:

2014թ. փետրվարի 3-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Երևանի առևտրաարդյունաբերական պալատի միջև կնքվել է համագործակցության հուշագիր՝ հայ գործարարների միջազգային կարողությունների զարգացման ուղղությամբ համագործակցության հաստատման վերաբերյալ: Նշված հուշագրի շրջանակներում ս.թ. փետրվարի 17-ին Երևանի առևտրաարդյունաբերական պալատում տեղի է ունեցել **գործարար հանդիպում հայ և Նիժնի Նովգորոդի տարածաշրջանի ընկերությունների միջև**: Ռուս գործարարները ներկայացրել են չափագրական սարքավորումների, մետաղական կոնստրուկցիաների, ավտոբուսների արտադրության, ինչպես նաև այլ ոլորտներ: Նույն հուշագրի շրջանակներում Երևանի առևտրաարդյունաբերական պալատի հետ համագործակցության շրջանակներում ս.թ. ապրիլի 9-ին պալատում կայացել է **հանդիպում լեհ գործարարների հետ**: Հանդիպմանը մասնակցել են 13 հայ գործարարներ: Լեհ գործարարները ներկայացնում էին կահույքի, կլինիկական և անասնաբուժական նյութերի, տրանսֆորմատորների, սպիտակուցների, նորարական հսկողության համակարգերի և այլնի արտադրությամբ, ինչպես նաև կոշիկի, տեքստիլի, բժշկական արտադրանքի, մրգեր/բանջարեղենների, թռչնի մսի վաճառքով զբաղվող ընկերություններ: Նույն հուշագրի շրջանակներում 2014թ. հոկտեմբերի 9-ին կազմակերպվել են գործարար հանդիպումներ՝ **Մոսկվայի տարածաշրջանի գործարարների հետ**: Ռուս գործարարները ներկայացնում էին տեքստիլի, օդափոխիչ համակարգերի, բժշկական ապարատուրաների և դեղագործական միջոցների արտադրության, ՏՏ ծառայությունների տրամադրման և այլ ոլորտներ: Հանդիպմանը մասնակցել են 3 ընկերություններ:

Գործարար հանդիպումներ են կազմակերպվել նաև ս.թ. մարտի 5-ին Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի կողմից իրականացվող «*East invest*» ծրագրի շրջանակներում տեղի ունեցած ներդրումային համաժողովի ընթացքում, որի մասին տեղեկատվությունը տարածվել է նաև ՁԵՑ-ի շրջանակներում՝ որպես գործարար համագործակցության հաստատման միջոցառում: Հանդիպմանը մասնակցել են մի շարք շինարարական ընկերություններ, որոնցից «Հենման կետ»ՍՊԸ-ն ձեռք է բերել նախնական համաձայնություն անգլիական ընկերության հետ՝ հետագա համագործակցության ուղղությամբ:

11 ընկերություններ մասնակցել են ռուս-հայկական 6-րդ արդյունաբերական ցուցահանդեսին, որը տեղի է ունեցել ս/թ հոկտեմբերի 23-ին:

**«Մտավոր սեփականության իրավունքների կիրարկման համակարգի հզորացումը ՀՀ-ում»** Թվինինգ ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում 600 օրինակից

հայերեն և անգլերեն լեզուներով տպագրվել է «Գումար վաստակեք Ձեր գաղափարի օգնությամբ» տեղեկատվական գրքույկը:

Համաշխարհային Բանկի խմբի միջազգային ֆինանսական կորպորացիայի և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից 2014թ. հունիսի 27-ին կազմակերպվել է **«Արդիական սննդի անվտանգության կառավարման համակարգերը»** թեմայով սեմինար: Սեմինարի ընթացքում շուրջ 25 հայ գործարարների ներկայացվել են ապրանքի արտադրության պրակտիկայի (GMP), ապրանքի հիգիենայի պրակտիկայի (GHP), ինչպես նաև HACCP համակարգերը: Սեմինարի վերջում մասնակիցներին տրամադրվել են չրարտադրության ոլորտում GMP/ GHP ներդրման ձեռնարկներ, GMP/ GHP ներդրման ուղեցույցներ, HACCP ներդրման ձեռնարկներ, ինչպես նաև դրանց կոմպակտ դիսկերը:

Միջազգային և տեղական այլ ծրագրերի հետ համագործակցության շրջանակներում ընդհանուր առմամբ աջակցություն է տրամադրվել 81 ՓՄՁ սուբյեկտների, այդ թվում՝

- 16 ընկերություններ մասնակցել են PRoREMaS դասընթացին,
- 12 գործարարների միջև փոխանակվել են կոնտակտային տվյալներ,
- 17 գործարարներ մասնակցել են գործարար հանդիպումների,
- 11 գործարարներ մասնակցել են ցուցահանդեսի,
- 25 գործարարներ մասնակցել են սեմինարի:

10. **«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների վարձատրությանը «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրով՝ նախատեսված 151,983,700 ՀՀ դրամից 2014 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից ուղղվել է 151,983,700 ՀՀ դրամ:**